ԻՐԱՎԱԿԱՆ
ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԵՆՏՐՈՆ

2022

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԴԻԶԱՅՆԸ՝
«Դիմարկ» ՍՊԸ

Բովանդակություն

Կազմակերպության մասին	3
Ծրագրերի ամփոփում	4
Կազմակերպության գործունեությունը՝ ուղղված ազատազրկված անձանց և հասարակության միջև կապի ամրապնդմանը	7
Վերապատրաստման դասընթացներ՝ քրեակատարողական հիմնարկների սոցիալական աշխատողների, բժիշկների և հոգեբանների համար	28
Հանրային քննարկումներ	36
Ջատագովություն՝ ի նպաստ ազատազրկված անձանց իրավունքների պաշտպանության	48
Քրեակատարողական հիմնարկների մշտադիտարկում և հանրային վերահսկողություն՝ ի նպաստ ազատազրկված անձանց իրավունքների պաշտպանության	56
Համագործակցության ընդլայնում	61
Կազմակերպության կարողությունների զարգացում	66
Կազմակերպության տեսանելիության բարձրացում	69
Նշանավոր օրեր	71

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Իրավական նախաձեռնությունների կենտրոն» իրավապաշտպան հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնադրվել է 2017 թվականին:

Կազմակերպության գործունեության առանցքում ազատազրկված անձանց իրավունքների պաշտպանությունն է: Այս համատեքստում ուսումնասիրվել են ազատազրկված անձանց վերասոցիալականացման հիմնախնդիրները, նրանց աշխատանքի և կրթության իրավունքի իրացման խոչընդոտները, քրեակատարողական հիմնարկներում սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խտրականության դրսևորումները, ազատազրկված և պրոբացիայի ծառայությունում հաշվառված կանանց ու աղջիկների կարիքներն ու խնդիրները համավարակի պայմաններում:

Կազմակերպությունն իրականացրել է ծրագրեր՝ ուղղված քրեակատարողական հիմնարկների սոցիալական աշխատողների, հոգեբանների և բուժանձնակազմի մասնագիտական հմտությունների զարգացմանը, ազատազրկված և պրոբացիայի ծառայությունում հաշվառված կանանց ու աղջիկների հզորացմանը և աշխատանքային հմտությունների բարելավմանը, ազատազրկված անձանց նկատմամբ հանրության վերաբերմունքի փոփոխությանը:

Կազմակերպությունը զբաղվում է քրեակատարողական համակարգում գենդերային զգայուն քաղաքականության ներդրման, քրեակատարողական հիմնարկներում և պրոբացիայի ծառայությունում COVID-19 համավարակին գենդերազգայուն արձագանքի մեխանիզմների մշակման և ներդրման ջատագովությամբ:

Հաշվետու տարում Կազմակերպության շահառուների թիվն ավելացել է 35-ով.

- 30 դատապարտյալ (6 կին և 24 տղամարդ, որից 13-ը՝ ցմահ)
- 5 կալանավորված անձ (4 կին և 1 անչափահաս տղա)
- պրոբացիայի 4 կին շահառու:

ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

«COVID-19-ի ազդեցությունն ազատազրկված և պրոբացիայի ծառայությունում հաշվառված կանանց ու աղջիկների իրավունքների պաշտպանության վրա»



Կազմակեպությունը 2022 թվականին Հայաստանում կանանց հիմնադրամի աջակցությամբ իրականացրել է «COVID-19-ի ազդեցությունն ազատազրկված և պրոբացիայի ծառայությունում հաշվառված կանանց ու աղջիկների իրավունքների պաշտպանության վրա» ծրագիրը, որի նպատակն է խթանել ազատազրկված և պրոբացիայի ծառայությունում հաշվառված կանանց ու աղջիկների իրավունքների պաշտպանությունը համավարակի պայմաններում և բարձրացնել նրանց վերաբերյալ հանրային իրազեկվածությունը:

Ծրագրի խնդիրներն են.

- Ուսումնասիրել և վերլուծել ազատազրկված և պրոբացիայի ծառայությունում հաշվառված անձանց շրջանում Covid-19-ի կանխարգելմանը, խնամքին և բուժմանն ուղղված ներպետական օրենսդրությունը, միջազգային չափորոշիչները և ուղեցույցերը՝ գենդերային զգայուն լինելու տեսանկյունից:
- Ուսումնասիրության արդյունքների հիման վրա մշակել ազատազրկված և պրոբացիայի ծառայությունում հաշվառված կանանց ու աղջիկների վիճակի բարելավմանն ուղղված առաջարկություններ:
- Բացահայտված հիմնախնդիրների շուրջ իրականացնել ջատագովություն և հանրային իրազեկում:

«Ջատագովելով բանտերում և պրոբացիայի ծառայությունում COVID-19 համավարակին գենդերազգայուն արձագանքի մեխանիզմների մշակման և ներդրման կարևորությունը»

Կազմակերպությունը Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, Նիդեռլանդների Հելսինկյան կոմիտեի «COVID-19 Համերաշխության ծրագիր 2020-2022» ծրագրի շրջանակում 2022 թվականին իրականացրել է «Ջատագովելով բանտերում և պրոբացիայի ծառայությունում COVID-19 համավարակին գենդերազգայուն արձագանքի մեխանիզմների մշակման և ներդրման կարևորությունը» ծրագիրը, որի նպատակն է շահերի պաշտպանության միջոցով նպաստել բանտերում և պրոբացիայի ծառայությունում COVID-19 համավարակին գենդերազգայուն արձագանքի մեխանիզմների մշակմանը և ներդրմանը:

Ծրագրի խնդիրներն են.

- Ուսումնասիրել բանտերում և պրոբացիայի ծառայությունում COVID-19 համավարակի կանխարգելմանն առնչվող միջազգային և ներպետական փաստաթղթերը՝ գենդերազգայուն լինելու տեսանկյունից, մշակել իրավիճակի բարելավմանն ուղղված քաղաքականության փաստաթուղթ:
- Իրականացնել բացահայտված հիմնախնդիրների լուծմանն ուղղված շահերի պաշտպանություն:
- Բացահայտված հիմնախնդիրների շուրջ իրականացնել հանրային իրազեկում:

«Օգնող մասնագետների զգայունության բարձրացում և մասնագիտական կարողությունների բարելավում՝ ի նպաստ ազատազրկված ԼԳԲՏ անձանց բարեկեցության»

Կազմակերպությունը 2022 թվականին Շվեդական զարգացման գործակալության ֆինանսական աջակցությամբ իրականացրել է «Օգնող մասնագետների զգայունության բարձրացում և մասնագիտական կարողությունների բարելավում՝ ի նպաստ ազատազրկված ԼԳԲՏ անձանց բարեկեցության» ծրագիրը, որի նպատակն է նպաստել ազատազրկված ԼԳԲՏ անձանց համար ապահով սոցիալ-հոգեբանական և առողջապահական ծառայությունների հասանելիությանը՝ համապատասխան մասնագետների զգայության բարձրացման և մասնագիտական կարողությունների զարգացման միջոցով:

Ծրագրի խնդիրներն են.

- Բարձրացնել քրեակատարողական հիմնարկների հոգեբանների, սոցիալական աշխատողների և բժշկական անձնակազմի զգայունությունն ազատազրկված ԼԳԲՏ անձանց նկատմամբ:
- Զարգացնել քրեակատարողական հիմնարկների հոգեբանների, սոցիալական աշխատողների և բժշկական անձնակազմի մասնագիտական կարողություններն ազատազրկված ԼԲԳՏ անձանց հետ աշխատանքում:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԿԱՊԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆԸ

Ամփոփվել է «Հայացք ներսից» խորագրով ֆոտոշարքը

Հաշվետու տարում Կազմակերպությունն ամփոփել է «Հայացք ներսից» խորագրով 15 ֆոտոշարք, որոնք տեղադրվել են www.prisoninitiatives.am կայքի «Ֆոտոպատմություններ» բաժնում: Ներկայացվել են քրեակատարողական հիմնարկները, դրանց ներսում գործող ուղղիչ հիմնարկների տեսակները, ազատազրկված անձանց սննդի կազմակերպման, ստեղծագործական աշխատանքով զբաղվելու հնարավորությունները, աշխատանքով, կրթությամբ, ընթերցանությամբ և մարմնամարզությամբ զբաղվելու, հեռախոսակապից, տեսակապից և զբոսանքից օգտվելու կարգը, արհեստագործական, կարճատև և երկարատև տեսակցության, մանկական և ուսումնական սենյակները, եկեղեցին, զբոսաբակերը, ընթերցասրահները, գրադարանները, մարզասրահները, կարանտինային խցերը, պատժախցերը և դրանց շենքային պայմանները:

Իրականացվել է «Ձեռքդ տո՛ւր, հասարակություն» խորագրով ֆոտոարշավ՝ հետևյալ ուղերձներով՝ «Դատապարտի՛ր արարքը, ոչ թե մարդուն», «Երբեմնի դատապարտյալ, բայց մարդ՝ ընդմիշտ», «Փոխի՛ր վերաբերմունքդ, փոխի՛ր կյանքեր», «Ձեռքս բռնի՛ր, հասարակություն, ինձնից երես մի՛ դարձրու»:

- «Ձեռքդ տո՛ւր, հասարակություն». Ֆոտոարշավ»
- «Հայաստանի քրեակատարողական հիմնարկները»
- «Ուղղիչ հիմնարկի տեսակները քրեակատարողական հիմնարկներում»
- «Բանտային արվեստ»

- Արհեստագործական սենյակները քրեակատարողական հիմնարկներում
- «Աշխատանքը քրեակատարողական հիմնարկներում»
- «Կարանտինային խցերը և պատժախցերը քրեակատարողական հիմնարկներում»
- «Սննդի կազմակերպումը քրեակատարողական հիմնարկներում»
- «Հեռախոսակապը և տեսակապը քրեակատարողական հիմնարկներում»
- «Ուսումնական սենյակները քրեակատարողական հիմնարկներում»
- «Եկեղեցին քրեակատարողական հիմնարկներում»
- «Զբոսանքը քրեակատարողական հիմնարկներում»
- «Տեսակցությունները քրեակատարողական հիմնարկներում»
- «Մարզասրահները քրեակատարողական հիմնարկներում»
- «Ընթերցանությունը քրեակատարողական հիմնարկներում»

Ամփոփվել են «Բանտային պատմություններ» և «Նամակներ բանտից» հոդվածաշարերը, «Մարդիկ՝ ճաղերից այն կողմ» խորագրով տեսաֆիլմերի շարքը

Հաշվետու տարում Կազմակերպությունն ամփոփել է «Բանտային պատմություններ» և «Նամակներ բանտից» հոդվածաշարը, որի շրջանակում www.prisoninitiatives.am կայքի «Հոդվածաշար» բաժնում հրապարակվել է 20 հոդված:

«Բանտային պատմություններ» խորագրի 2 հոդված ներկայացնում են նախկինում կալանավորված տրանս կնոջ և նախկին ցմահ դատապարտյալի ազատազրկման փորձառությունը:

- «Հուշեր բանտից կամ անտեսված ինքնություն»
  Հեղինակ՝ Նախկինում կալանավորված տրանս կին
- «Բանտային հուշեր կամ կորցրած երիտասարդությունս»
  Հեղինակ՝ Ստեփան Գրիգորյան, նախկին ցմահ դատապարտյալ
  (Մահացել է 2022 թվականի մարտին)

«Նամակներ բանտից» խորագիրն ամփոփում է անազատության մեջ գտնվող անձանց կողմից ներկայացված հոդվածները: «Աբովյան» ՔԿՀ-ից ուղարկվել է 7 հոդված, որից 6-ի հեղինակները կալանավորված (3 կին) և դատապարտյալ (3 կին) կանայք են: 1 հոդված պատմում է կալանավորված անչափահաս տղայի մասին: Մնացած 11 հոդվածները գրվել են «Արմավիր», «Դատապարտյալների հիվանդանոց», «Կոշ», «Հրազդան», «Նուբարաշեն» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում պահվող ազատությունից զրկված 9 տղամարդկանց կողմից, որոնցից 1-ը կալանավորված անձ է, 4-ը՝ ցմահ, մյուս 4-ը՝ որոշակի ժամկետով ազատազրկված դատապարտյալներ:

«Վանաձոր» ՔԿՀ

«Մեզ հետ պատժվում են նաև մեր հարազատները»

Հեղինակ՝ Արեն Չատինյան, ցմահ դատապարտյալ

«Աբովյան» ՔԿՀ

«Ազատազրկումն իր հետ բերում է մեծ կորուստներ»

«Աստված երբեք չի մերժում»

«Ցտեսությո՛ւն, արտաքին աշխարհ»

Հեղինակ՝ Կալանավորված կանայք

«Ընտանիքի կարոտը և բանտի մենակությունը»

Հեղինակ՝ Անչափահաս կալանավորված տղա

«Ազատազրկումն իր հետ բերում է մեծ կորուստներ»

«Աստված երբեք չի մերժում»

«Ցտեսությո՛ւն, արտաքին աշխարհ»

Հեղինակ՝ Դատապարտյալ կանայք

«Կոշ» ՔԿՀ (հիմնարկի գործունեությունը 2022 թվականի հունվարի 1-ից դադարեցվել է)

«Բանտ և բազում անլուծելի հարցեր...»

Հեղինակ՝ Ա.Ս., դատապարտյալ

«Արմավիր» ՔԿՀ

«Քրեական պատժի «ճգնաժամը»»

Հեղինակ՝ Արտակ Ճաղարյան, ցմահ դատապարտյալ

«Մենք դեռ կանք»

«Ազատազրկման փորձություն և հետևանք»

Հեղինակ՝ Միքայել Մարտիրոսյան, ցմահ դատապարտյալ

«Նացիստական պատժախցից մինչև ժամանակակից բանտ»

«Բանտի ժամանակի կամրջով»

Հեղինակ՝ Մհեր Ենոքյան, ցմահ դատապարտյալ

«Ճակատագրի կանխորոշումը՝ բանտ»

Հեղինակ՝ Ն.Հ., դատապարտյալ

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ

«Ճաղերի կամ ազատազրկվածության հիմնական էֆեկտները»

Հեղինակ՝ Վլադիմիր Գրիգորյան, դատապարտյալ

«Հրազդան» ՔԿՀ (հիմնարկի գործունեությունը 2022 թվականի հունվարի 1-ից դադարեցվել է)

«Բանտային պայմաններին հաշտվելու դժվարությունները»

Հեղինակ՝ Դավիթ Հովհաննիսյան, կալանավորված անձ

«Նուբարաշեն» ՔԿՀ

«Ավա՛ղ, կյանքը հեքիաթ չէ...»

Հեղինակ՝ Դ.Հ., դատապարտյալ

Հաշվետու տարում ամփոփվել է «Մարդիկ՝ ճաղերից այն կողմ» խորագիրը կրող 16 տեսաֆիլմ, որոնց մասնակցություն են ունեցել «Աբովյան», «Արմավիր», «Գորիս», «Հրազդան» և «Սևան» ՔԿՀ-ներում պատիժ կրող 9 դատապարտյալ (2 կին և 7 տղամարդ, որից 2-ը՝ ցմահ դատապարտյալ), 2 նախկին ցմահ դատապարտյալ, պրոբացիայի 1 տղամարդ շահառու, քրեակատարողական հիմնարկների հոգևոր սպասավոր և ցմահ դատապարտյալի ընտանիքի անդամ:

- «Կիսափակ ազատություն»
- «Ցմահ ազատազրկումը աղետ է»
- «Բանտված կարոտ»
- «Կորսված ազատություն»
- «Կորսված երիտասարդություն»
- «Բանտված հավատ»

- «Ապրելու կամքը»
- «Ուշացած զղջում»
- «Աստված միշտ ներում է»
- «Ապագայի հույսով»
- «Ազատության ճանապարհին»
- «Բանտը և ես»
- «Որդու կարոտը»
- «Արգելված երջանկություն»
- «Ազատության գինը»
- «Ձեռքդ տո՛ւր, հասարակություն»

Հաշվետու տարում ամփոփվել է նաև «Կրթությունը՝ ճաղերից այն կողմ» խորագրով տեսաֆիլմերի շարքը, որը ներկայացնում է ազատազրկված անձանց հանրակրթության, ոչ ֆորմալ և բարձրագույն կրթության կազմակերպման գործընթացը և խնդիրները: Տեսաֆիլմերի նկարահանմանը մասնակցություն են ունեցել «Արմավիր» և «Սևան» ՔԿՀ-ներում պատիժ կրող 3 դատապարտյալ (1-ը՝ ցմահ, 2-ը՝ որոշակի ժամկետով ազատազրկված):

- «Հանրակրթությունը ՔԿՀ-ներում 1»
- «Հանրակրթությունը ՔԿՀ-ներում 2»
- «Ոչ ֆորմալ կրթությունը ՔԿՀ-ներում»
- «Բարձրագույն կրթությունը ՔԿՀ-ներում»

Տեսաֆիլմերը հասանելի են www.prisoninitiatives.am կայքի «Տեսաֆիլմեր» բաժնում և կազմակերպության յութուբի ալիքում:

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտին առնչվող խնդիրներն առավել առարկայական և հանրության լայն շերտերին հասանելի դարձնելու, նրանց իրազեկվածությունը և զգայունությունը բարձրացնելու, ինչպես նաև վերաբերմունքի փոփոխությանը նպաստելու համար Կազմակերպությունը տեսաֆիլմերի նկարահանման մեջ ներգրավել է ազատազրկված անձանց, ովքեր համակարգային խնդիրները ներկայացրել են անձնական փորձառության միջոցով:

Հոդվածների և տեսաֆիլմերի շնորհիվ անազատության մեջ գտնվող անձինք և նրանց ընտանիքի անդամները հնարավորություն են ունեցել բարձրաձայնել իրենց մտահոգությունները, ներկայացնել անձնական պատմությունները, ազատությունից զրկվելու հետևանքները, բանտային կյանքի դժվարությունները և այնտեղ անցկացրած տարիների փորձառությունը:

Նախաձեռնությանը մասնակցած ազատազրկված անձինք և պրոբացիայի շահառուներն արժանացել են շնորհակալագրերի, իսկ հոդված ներկայացրած անձինք նաև հոնորարներ են ստացել: Շնորհակալագրերը կցվել են ազատազրկված անձանց անձնական գործերին և նպաստել են, որպեսզի նրանք քրեակատարողական հիմնարկների պետերի կողմից դրական բնութագիր ստանան կամ խրախուսանքների արժանանան:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հոդված ներկայացրած 2 դատապարտյալ բարձրագույն կրթություն են ստանում, Կազմակերպությունը հոնորարները փոխանցել է համալսարանին՝ որպես նրանց 2021 թվականի 1-ին կիսամյակի 1 ամսվա ուսման վարձ:

Տեսաֆիլմերում առաջ քաշված խնդիրները և դրանց կարգավորման վերաբերյալ առաջարկությունները ներկայացվել են Արդարադատության նախարարությանը, քրեակատարողական և պրոբացիայի ծառայություններին:

Կազմակերպությունը տեսաֆիլմերի նկարահանումից հետո նախաձեռնել է նաև դրանց քննարկումը, որին մասնակցել են պատասխանատու պետական կառույցների ներկայացուցիչները: Այդպիսով Կազմակերպությունը պետական կառույցների շրջանակներում հանրայնացրել է տեսաֆիլմերի միջոցով վերհանված խնդիրները:



Առաջին հանդիպումը տեղի է ունեցել 2022 թվականի հունվարի 14-ին Պրոբացիայի ծառայության Երևանի քաղաքային մարմնի գրասենյակում: Հանդիպմանը մասնակցել են Պրոբացիայի ծառայության Երևանի քաղաքային մարմնի այն աշխատակիցները, որոնք կազմում են պայմանական վաղաժամկետ ազատման վերաբերյալ զեկույցները:

Հանդիպման ժամանակ ցուցադրվել է 3 տեսաֆիլմ, որին հաջորդել են քննարկում և մտքերի փոխանակում: Պրոբացիայի ծառայության աշխատակիցները նշել են, որ տեսաֆիլմերի միջոցով վերհանված խնդիրներն ու մտահոգություններն իրենց կօգնեն դատապարտյալների հետ աշխատանքի ընթացքում ուշադրություն դարձնել նրանց կողմից մատնանշված խնդիրներին: Առաջարկել են հետագա նմանատիպ նախաձեռնությունների ժամանակ հակիրճ անդրադարձ կատարել այն հարցին, թե ազատազրկված անձինք ինչ վերաբերմունք ունեն իրենց կողմից կատարված արարքի նկատմամբ, արդյոք զղջո՞ւմ են, թե՞՝ ոչ: Այս մոտեցումը հասարակությանը կօգնի ավելի ամբողջական պատկերացում կազմել ազատազրկված անձանց վերաբերյալ:

2022 թվականի ապրիլի 14-ին Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը հյուրընկալվել է Երևանի պետական համալսարանի Իրավագիտության ֆակուլտետի «Քրեական արդարադատություն և փաստաբանություն» մագիստրոսական ծրագրի ուսանողներին: Նրանք ապագա ոլորտային մասնագետներ են, և նմանատիպ քննարկումներն օգնում են առնչվել քրեակատարողական համակարգում առկա պրակտիկ խնդիրներին:

Ն. Հովհաննիսյանն ուսանողներին է ներկայացրել քրեակատարողական հիմնարկների խցերի, կացարանների, կարանտինային բաժանմունքների և պատժախցերի պայմաններն արտացոլող ֆոտոշարքերը, որոնք դիտելուց և քննարկելուց հետո ուսանողները շեշտադրել են այն հանգամանքը, թե այդ պայմաններն արդյո՞ք կարելի է դիտարկել որպես խոշտանգում: Քննարկման ավարտին ցուցադրվել է «Ապագայի հույսով» տեսաֆիլմը, որը պատմում է նախկինում ցմահ ազատազրկման դատապարտված Վահագն Մարուքյանի մասին:

Հանդիպման ավարտին ուսանողները նշել են, որ ֆոտոշարքերի միջոցով առավել ընդհանրական պատկերացում են կազմել բանտային առօրյայի և խնդիրների մասին, իսկ տեսաֆիլմն օգնել է կենտրոնանալ ցմահ ազատազրկման փորձառություն ապրած մարդու զգացմունքների և կյանքի նկատմամբ ունեցած վերաբերմունքի վրա:

Նախաձեռնության շրջանակներում Կազմակերպության և դատապարտյալների միջև կայուն և շարունակական համագործակցություն է ձևավորվել: Հաշվետու տարում այն առավել սերտ է եղել «Արմավիր» ՔԿՀ-ում գործող դատապարտյալների ինքնագործ մշակութային միավորման հետ:

Կազմակերպությունը միավորման անդամներին հնարավորություն է ընձեռել www.prisoninitiatives.am կայքում հրապարակել միավորման գործունեության մասին հոդվածներ և բանտային նամակներ: Նրանք այդկերպ հանրությանն իրազեկել են միավորման մասին և համագործակցության առաջարկներ ներկայացրել.

> «Ինքնագործ միավորումները զարգացնող, կրթող, վերականգնողական կոմպլեքսային գործառույթներ են կատարում»
>
> Հեղինակ՝ Գեորգի Խանամիրյան, ցմահ դատապարտյալ

«Մշակույթը ճաղեր չի ճանաչում»

«Դատապարտյալներով «այցելեցինք» թանգարան»

«Մեր ստեղծագործությունների ցուցահանդեսը»

«Տիգրան Խզմալյանի «Գողացված դարը» ֆիլմը՝ բանտում...»

«Սերատունը». Ստեղծագործում են դատապարտյալները

Հեղինակ՝ Մհեր Ենոքյան, ցմահ դատապարտյալ

2022 թվականի մայիսի 10-ին «Արմավիր» ՔԿՀ-ում տեղի է ունեցել ամփոփիչ միջոցառում՝ նվիրված միավորման ստեղծման մեկամյակին: Դատապարտյալները ներկայացրել են միավորման գործունեությունը՝ հանդիպումներ տարբեր ոլորտի մասնագետների հետ, դասընթացներ, քննարկումներ և այլն: Նրանք անդրադարձել են միավորման առաջիկա ծրագրին, որի շրջանակներում նախատեսում են շարունակել հասարակական, մշակութային գործիչների հետ հանդիպումների շարքը, կազմակերպել մրցույթներ, ինտելեկտուալ խաղեր, կապեր հաստատել գրախանութների և լրատվամիջոցների հետ:

Միավորման գործունեությանն աջակցելու և վերջինիս հետ սերտ համագործակցելու համար Նարե Հովհաննիսյանը միավորման անդամ դատապարտյալների կողմից շնորհակալագրի է արժանացել:

2022 թվականի մայիսի 22-ին Ն. Հովհաննիսյանը հանդիպել է միավորման անդամների հետ: Քննարկվվել են Կազմակերպության և միավորման հետագա համագործակցության հնարավորությունները: Դատապարտյալներն առաջարկություններ են ներկայացրել ձեռքի աշխատանքների վաճառքի և մշակութային միջոցառումների կազմակերպման ձևաչափի վերաբերյալ: Կարևորվել է այնպիսի աշխատանքների իրականացումը, որոնք կնպաստեն ազատազրկված անձանց և հասարակության միջև հաղորդակցության ամրապնդմանը:

«Ձեռքդ տո՛ւր, հասարակություն». Ազատազրկված անձանց ստեղծագործական աշխատանքների ցուցահանդես-վաճառք

Կազմակերպության նախաձեռնությամբ 2022 թվականի մարտի 11-ին տեղի է ունեցել ազատազրկված անձանց ստեղծագործական աշխատանքների ցուցահանդես-վաճառք, որը կրում էր «Ձեռքդ տո՛ւր, հասարակություն» խորագիրը:

Այն նպատակ ուներ ոչ միայն փոխելու հասարակության կարծիքն անազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ, այլև միտված էր խթանելու դատապարտյալների ստեղծագործական ձիրքը, գնահատելու գեղեցիկը զգալու, արարելու և ներկայացնելու նրանց անկեղծ ձգտումը: Հասարակության վերաբերմունքն ու գնահատանքը կարող են լծակ դառնալ ազատազրկված անձանց համար՝ ամբողջովին փոխելու և վերանայելու իրենց կյանքը:

Ցուցահանդես-վաճառքին ներկայացվել են «Աբովյան», «Արմավիր», «Նուբարաշեն» և «Սևան» ՔԿՀ-ներից 27 դատապարտյալի (3 կին և 24 տղամարդ, որից 13-ը՝ ցմահ դատապարտյալ) և 3 կալանավորված անձի (2 կին և 1 անչափահաս տղա) գեղանկարչական, փայտից, կավից և այլ նյութերից պատրաստված աշխատանքները՝ զարդատուփեր, գրչամաններ, գրքեր, թաշկինակներ, գուլպաներ, անկողնային պարագաներ, թզբեխներ և այլ հուշանվերներ:

Դատապարտյալներից ոմանք մասնակցում են «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ի գեղագիտական կրթության դասընթացներին, ոմանք ներգրավված են արհեստագործական աշխատանքներում, ոմանք ունեն ստեղծագործելու ունակություն և խցային պայմաններում ծնունդ են տալիս իրենց գաղափարներին: Թեև միջոցները սուղ են, սակայն անձինք կարողանում են իրենց ներաշխարհը ստեղծագործությունների միջոցով արտահայտել: Իսկ հումքը կամ տրամադրվում է, կամ դատապարտյալներն են ձեռք բերում՝ կախված նրանից, թե ինչ աշխատանք են կատարում:

Միջոցառումը մարդաշատ էր: Ներկա էին 60-ից ավել հյուրեր միջազգային կազմակերպություններից և դիվանագիտական կառույցներից, Արդարադատության նախարարությունից, Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունից, Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնից և հիմնարկներից, Պրոբացիայի ծառայությունից, Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից, «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» և «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ներից, քաղաքացիական հասարակության տարբեր կառույցներից, ինչպես նաև պետական և մասնավոր բուհերի ուսանողներ, արվեստագետներ, դատապարտյալների հարազատներ և նախկին դատապարտյալներ:

Դա խոսում է այն մասին, որ ազատազրկված անձանց ձեռքի աշխատանքները հետաքրքրել են մարդկանց: Ներկայացված աշխատանքներից ամենաշատը գնվել են կավից պատրաստված իրերը, թզբեխները, նկարները և զարդերը: Այցելուների ուշադրությունից չեն վրիպել արհեստական ծաղիկները, զարդատուփերը և վիտրաժ-լուսամփոփները: Գնվել է նաև է 3 գիրք, որից 2-ը՝ բանաստեղծական ժողովածու, 1-ը՝ փայտե կազմով Աստվածաշունչ: Քիչ են գնվել հիմնականում կտորի ձեռագործ աշխատանքները: Ցուցահանդես-վաճառքին ներկայացված աշխատանքների գները սահմանել են հեղինակները, որոնց և փոխանցվել է ողջ հասույթը: Կազմակերպությունը շահույթ չի հետապնդել:

Ազատազրկված անձինք իրենց ստեղծագործական աշխատանքներով 416,800 ՀՀ դրամ են աշխատել, որը, ըստ քրեակատարողական հիմնարկների, ունի հետևյալ պատկերը.

- «Աբովյան» ՔԿՀ՝ 20,000 ՀՀ դրամ,
- «Արմավիր» ՔԿՀ ՝ 372,300 ՀՀ դրամ,
- «Նուբարաշեն» ՔԿՀ ՝ 14,500 ՀՀ դրամ,
- «Սևան» ՔԿՀ ՝ 10,000 ՀՀ դրամ:

Ազատազրկված անձանց համար դա մեծ ձեռքբերում էր, քանի որ կկարողանան ստացված գումարով իրենց կարիքներն ինքնուրույն հոգալ և վայելել իրենց աշխատանքի պտուղները: Կազմակերպության ունեցած տեղեկություններով՝ կալանավորված անչափահաս տղան իր աշխատած գումարը փոխանցել է ընտանիքին: Ոմանք այդ գումարով անձնական գնումներ են կատարել: Ճիշտ է, ընտանիքներն ու հարազատներն աջակցում են, գումար և հանձնուք են փոխանցում, սակայն իրենց աշխատած գումարով ինչ-որ բան գնելն այլ զգացողություն է պատճառում: Ոմանք իրենց վաստակած գումարը փոխանցել են հաշմանդամություն ունեցող զինվորներին, մյուսներն էլ հումք են գնել:

Ցուցահանդես-վաճառքը լուսաբանվել է տարբեր լրատվամիջոցների կողմից:

1

«ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈ»

«Կանայք ճաղերից այն կողմ. երբ անազատությունը նաև հնարավորություն է»

«Գաղութի ուլունքները. ի՞նչ կտանի հետը պերուացի կին դատապարտյալը»

2

ՌԱԴԻՈ «ՎԱՆ»

«Ստեղծագործություններում նրանց հույզերն են, ակնկալիքները». դատապարտյալների աշխատանքերը՝ «Ձեռքդ տո՛ւր, հասարակություն» ցուցահանդեսին»

3

ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ, ԼՈՒՐԵՐ

«Ազատազրկված անձանց աշխատանքների ցուցահանդես վաճառք»

4

MEDIA HUB

«Ազատազրկված անձանց ստեղծագործական աշխատանքների ցուցահանդես»

5

FORRIGHTS.AM

«Ձեռքդ տո՛ւր, հասարակություն». ցուցադրվել են դատապարտյալների ստեղծագործությունները»

6

FREE NEWS

«Դատապարտյալների աշխատանքները վաճառվեցին և արժանացան մեծ ուշադրության»

7

EPRESS.AM

«Բանտային աշխատանքների ցուցահանդես-վաճառք»

8

ԱԼԻՔ ՄԵԴԻԱ

«Երբեմնի բանտարկյալ, բայց մարդ՝ ընդմիշտ»

Հաշվետու տարվա ընթացքում ազատազրկված անձանց ձեռքի աշխատանքների ցուցահանդես կազմակերպելը շարունակական բնույթ է կրել քրեակատարողական հիմնարկներում: Նմանատիպ միջոցառումները փոխում են դատապարտյալների վերաբերմունքը հոգևոր և բարոյական արժեքների նկատմամբ, նպաստում են կյանքի ու ապագայի հանդեպ լավատեսության ձևավորմանը և վերասոցիալականացման առավել դինամիկ ընթացքին:

- 2022 թվականի մայիսի 27-ին տեղի է ունեցել «Սևան» ՔԿՀ-ի մշակութային ինքնագործ միավորման անդամ դատապարտյալների ձեռքի աշխատանքների ցուցահանդեսը՝ տարբեր ոճի և բովանդակության փայտե քանդակներ, թզբեխներ, արհեստական ծաղիկներ:

- 2022 թվականի հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ, «Աբովյան» ՔԿՀ-ում կազմակերպվել է ցուցահանդես, որտեղ ներկայացվել են անչափահաս կալանավորված անձանց ձեռքի աշխատանքները:

- 2022 թվականի դեկտեմբերի 14-ին «Աբովյան» ՔԿՀ-ում տեղի է ունեցել «Իմ աշխատանքը գնահատված է» խորագրով ցուցահանդես-վաճառք, որին ներկայացվել են անչափահաս կալանավորված անձանց ձեռքի աշխատանքները:

2022 թվականի դեկտեմբերի 26-ին «Սևան» ՔԿՀ-ում տեղի է ունեցել հայ մեծանուն նկարիչ Մարտիրոս Սարյանին նվիրված ցուցահանդես, որտեղ ցուցադրվել են 25 դատապարտյալի ստեղծագործական աշխատանք:

«Երթևեկենք անվտանգ» սեղանի խաղ՝ կալանավորված անչափահասների և Պրոբացիայի ծառայությունում հաշվառված անչափահաս շահառուների համար

Ճաղերից այն կողմ հայտնված երեխաներին նույնպես պետք է ուշադրության արժանացնել և ժպիտներ պարգևել: Այս համատեքստում Կազմակերպությունը Հանրային քաղաքականության ինստիտուտի հետ համագործակցությամբ Հունիսի 1-ի՝ երեխաների պաշտպանության միջազգային օրվա առթիվ «Աբովյան» ՔԿՀ-ին և Պրոբացիայի ծառայությանը տրամադրել է «Ճանապարհային երթևեկության անվտանգության կանոնները մեր կյանքում» գրքույկներն ու «Երթևեկենք անվտանգ» սեղանի խաղը:

Նման նախաձեռնությունները շատ կարևոր են, քանի որ նպաստում են իրավախախտում կատարած անչափահասների արդյունավետ զբաղվածության ապահովմանը և նրանց գիտելիքների բարելավմանը: Օրինակ, «Երթևեկենք անվտանգ» սեղանի խաղը հետաքրքիր ժամանցի միջոցով սովորեցնում է ճանապարհային երթևեկության նշանները, հետիոտնի, հեծանվորդի և վարորդի անվտանգ վարքագծի կանոնները: Այս խաղի միջոցով նրանք կսովորեն երթևեկության կանոնները, ինչը կօգնի խուսափել ճանապարհատրանսպորտային խախտումներ կատարելուց:

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ, ԲԺԻՇԿՆԵՐԻ ԵՎ ՀՈԳԵԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Քրեակատարողական համակարգի սոցիալական աշխատողները, բժիշկները և հոգեբանները գոհունակությամբ են մասնակցել Կազմակերպության իրականացրած վերապատրաստման դասընթացներին, որոնց օրակարգը բավականին հագեցած էր:

Տեսական գիտելիքների փոխանցմանը զուգահեռ կատարվել են գործնական առաջադրանքներ, ցուցադրվել են մասնագիտական տեսանյութեր, կազմակերպվել են խմբային քննարկումներ և դերային խաղեր, որոնք օգնել են բարելավել տեսական գիտելիքները և զարգացնել գործնական հմտությունները:

Մասնագետները դիտարկել են ստացված գիտելիքները և հմտություններն ազատազրկված անձանց հետ աշխատանքում կիրառելու հնարավորությունները և խոչընդոտները, դրանց լուծման ուղիները: Միևնույն ժամանակ ուսումնասիրել են այն գործիքակազմերը, որոնք անհրաժեշտ են ազատազրկված խոցելի խմբերի, մասնավորապես կանանց և ԼԳԲՏ անձանց հետ տարվող աշխատանքի ընթացքում:

Դասընթացների իրականացման արդյունքում ավելի է ամրապնդվել Կազմակերպության համագործակցությունը Քրեակատարողական ծառայության և «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի, ոլորտային փորձագետների և կառույցների հետ: Դասընթացների արդյունքները ներկայացվել են Արդարադատության նախարարության Քրեական օրենսդրության, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի քաղաքականության մշակման վարչությանը, քննարկվել են հետագայում դրանք բարելավելու և ընդլայնելու հնարավորությունները:

Սոցիալական աշխատողների վերապատրաստման դասընթացը տեղի է ունեցել 2022 թվականի հոկտեմբերի 26-28-ը: Մասնակցել են քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի, «Աբովյան», «Արթիկ», «Արմավիր», «Դատապարտյալների հիվանդանոց», «Նուբարաշեն», «Սևան» և «Վանաձոր» ՔԿՀ-ների 9 սոցիալական աշխատող:

ՕՐ ԱՌԱՋԻՆ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 26

Դասընթացավար՝ Հավասարության և հոգեկան առողջության իրավունքի փորձագետ Անահիտ Չիլինգարյան

Թեմա՝ «Մարդու իրավունքներ և խտրականության արգելք»

Անդրադարձ է կատարվել մարդու իրավունքների հասկացությանը և զարգացման պատմությանը, միջազգային ու ներպետական փաստաթղթերին և պաշտպանության մեխանիզմներին, խտրականության արգելքով պաշտպանված հիմքերին և խտրականության իրավունքի պաշտպանության համակարգերին:

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27

Դասընթացավար՝ «Սոցիալական արդարություն» ՀԿ-ի ծրագրերի համակարգող, սոցիալական աշխատանքի փորձագետ Անուշ Դանոյան

Թեմա՝ «Սոցիալական աշխատանքի առանձնահատկություններն իրավախախտում կատարած անձանց հետ»

Սոցիալական տեսությունների համատեքստում անդրադարձ է կատարվել դևիանտ կամ շեղվող վարքին, ներկայացվել է դեպքի վարումը՝ որպես սոցիալական աշխատանքի մոդել, քննարկվել են հարցազրույցի վարման մեթոդը և տեխնիկաները, ուսումնասիրվել են իրավախախտում կատարած անձանց հետ տարվող սոցիալական աշխատանքի էթիկական նորմերը, սկզբունքները և իրավական հիմքերը:

ՕՐ ԵՐՐՈՐԴ՝ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28

Դասընթացավար՝ «Կանանց ռեսուրսային կենտրոն» ՀԿ-ի շահերի պաշտպանության համակարգող, սոցիալական աշխատանքի փորձագետ Աննա Հովհաննիսյան

Թեմա՝ «Գենդերազգայուն սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները կանանց տարբեր խմբերի հետ աշխատանքում»

Քննարկվել է, թե որոնք են գենդերազգայուն սոցիալական աշխատանքի էությունը և սկզբունքները: Անդրադարձ է կատարվել համակարգային բռնության դրսևորումներին: Քննարկվել են կանանց տարբեր խմբերի և ԼԳԲՏ անձանց հետ տարվող սոցիալական աշխատանքի առանձնահատկությունները:

«Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի բուժանձնակազմի վերապատրաստման դասընթացը տեղի է ունեցել 2022 թվականի նոյեմբերի 4-6-ը: Մասնակցել են ՊՈԱԿ-ի «Աբովյան», «Արթիկ», «Սևան» և «Վանաձոր» ՔԿՀ-ների ստորաբաժանումների ղեկավարները, «Դատապարտյալների հիվանդանոց» և «Սևան» ՔԿՀ-ների ստորաբաժանումների ատամնաբույժները, «Արմավիր», «Երևան-Կենտրոն» և «Վարդաշեն» ՔԿՀ-ների ստորաբաժանումների թերապևտները, «Արմավիր» ՔԿՀ-ի ստորաբաժանման դեղագետը, «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ի ստորաբաժանման ինֆեկցիոնիստը և «Նուբարաշեն» ՔԿՀ-ի ստորաբաժանման հոգեբույժը:

ՕՐ ԱՌԱՋԻՆ՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 4

Դասընթացավար՝ բժիշկ-ինֆեկցիոնիստ, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ամբուլատոր կլինիկայի ղեկավար, Առողջապահության ազգային ինստիտուտի ինֆեկցիոն հիվանդությունների ամբիոնի ասիստենտ Հերմինե Հովակիմյան

Թեմա՝ «Վնասի նվազեցման ծրագրերը (ՄԻԱՎ, Վիրուսային հեպատիտ Ց)»

Անդրադարձ է կատարվել ՄԻԱՎ վարակին, վերջինիս փոխանցման ուղիներին և գործոններին, վիրուսաբանությանը, ախտորոշմանը, կլինիկական ընթացքին և դասակարգմանը: Քննարկվել են վարակի բուժման սկզբունքները, ՀՌՎ դեղերը և ազդեցության մեխանիզմը, ինչպես նաև ՄԻԱՎ-ի նախա- և հետկոնտակտային կանխարգելումը: Այնուհետև բանախոսը ներկայացրել է Վիրուսային հեպատիտ Ց-ն, վերջինիս պատճառագիտությունը, համաճարակաբանությունը, բուժման ընդհանուր սկզբունքները և հնարավորությունները Հայաստանում:

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 5

Դասընթացավար՝ Իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ Իրավագիտության ֆակուլտետի դասախոս Շուշանիկ Ղուկասյան

Թեմա՝ «Առողջության պահպանման իրավունք»

Քննարկվել են պացիենտների և բուժաշխատողների իրավունքները և պարտականությունները, բժշկական գաղտնիք հանդիսացող տվյալները և դրանց փոխանցման կարգը, դատապարտյալների կողմից ներկայացվող բողոքների քննության առանձնահատկությունները, բողոքարկման իրավունքը, բողոքը քննող մարմինները, բողոքարկման ժամկետները, բողոքին ներկայացվող պահանջները, կալանավորված անձի և դատապարտյալի հաշվին և ընտրությամբ այլ բժշկի կողմից տրամադրվող մասնագիտական ծառայություններից օգտվելու ընթացակարգը:

ՕՐ ԵՐՐՈՐԴ՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 6

Դասընթացավար՝ «Իրավունքի զարգացման կենտրոն» ՀԿ-ի նախագահ, առողջության իրավունքի փորձագետ Վիոլետա Զոփունյան

Թեմա՝ «Տեղեկատվության շրջանառությունն առողջապահության ոլորտում»

Անդրադարձ է կատարվել առողջապահության ոլորտի հասկացություններին և դրանց կիրառմանը, բժշկական գաղտնիքին և պատասխանատվությանը, քննարկվել են տեղեկատվության ազատության իրավունքը և առողջապահության ոլորտի իրավակարգավորումների առանձնահատկությունները:

Հոգեբանների վերապատրաստման դասընթացը տեղի է ունեցել 2022 թվականի նոյեմբերի 9-11-ը: Մասնակցել է քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի, «Աբովյան», «Արթիկ», «Արմավիր», «Նուբարաշեն», «Սևան» և «Վարդաշեն» ՔԿՀ-ների 8 հոգեբան:

ԱՌԱՋԻՆ ՕՐ՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 9

Դասընթացավար՝ Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի հոգեբանության ամբիոնի վարիչ, դասախոս, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Հռիփսիմե Պետրոսյան

Թեմա՝ «Հոգեախտորոշման հմտությունները և ինքնաճանաչման հիմնական չափորոշիչները»

Հոգեախտորոշման հմտություններից և ինքնաճանաչման հիմնական չափորոշիչներից բացի քննարկվել են հոգեբանական աշխատանքի սկզբունքները, մեթոդները, դրանց կիրառման հմտությունները:

ՕՐ ԵՐԿՐՈՐԴ՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 10

Դասընթացավար՝ կլինիկական հոգեբան, հոգեթերապևտ, խմբավար Սիրանուշ Դավթյան

Թեմա՝ «Գենդերազգայուն հոգեբանական աջակցության կազմակերպման առանձնահատկությունները»

Անդրադարձ է կատարվել գենդերային բռնության հիմնական ենթատեսակներին, դրսևորման առանձնահատկություններին, ընտանեկան բռնության ենթարկված անձանց հոգեբանական աջակցությանը, բռնություն կիրառող անձանց հոգեբանական վերականգնման առանձնահատկություններին, ցուցադրվել է գենդերային սոցիալականացման մասին ֆիլմ:

ՕՐ ԵՐՐՈՐԴ՝ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11

Դասընթացավար՝ հոգեբան Կարեն Թորոսյան

Թեմա՝ «Ազատազրկման վայրում գտնվող անձանց հետ տարվող հոգեբանական աշխատանքները»

Քննարկվել են ազատազրկման վայրերում գտնվող անձանց հետ տարվող հոգեբանական աշխատանքի էթիկական նորմերը, հացադուլի, ինքնավնասումների, ինքնասպանության փորձերի դիմող ազատազրկված անձանց հետ տարվող հոգեբանական աշխատանքների առանձնահատկությունները:

ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտին առնչվող խնդիրները հանրայնացնելու և դրանց լայն քննարկումն ապահովելու նպատակով Կազմակերպությունը թեմատիկ մեդիա քննարկումներ է իրականացրել: Նմանատիպ քննարկումների նպատակը պետության հետ երկխոսություն սկսելը և քաղաքականություն մշակողների ու որոշում կայացնողների վրա ազդեցություն գործելն է, ինչպես նաև պետական կառույցների և ազատազրկված անձանց միջև հաղորդակցության ամրապնդումը: Բացի այդ, դրանք նպաստում են, որպեսզի պատասխանատու պաշտոնյաները դիրքորոշում արտահայտեն բացահայտված հիմնախնդիրների վերաբերյալ և պարտավորություն ստանձնեն դրանց կարգավորման ուղղությամբ:

Հանրային քննարկումներ ազատազրկված անձանց կրթության կազմակերպման խնդիրների վերաբերյալ

Ազատազրկված անձանց կրթության իրավունքն ամրագրված է քրեակատարողական ոլորտը կանոնակարգող օրենսդրությամբ: Բացի այդ, Հայաստանի կառավարությունը բազմիցս հայտարարել է, որ անցնում է վերասոցիալականացման քաղաքականության, որի կարևոր բաղադրիչներից են ազատազրկված անձանց կրթության իրավունքի իրացմանն ուղղված քայլերի ձեռնարկումը և մասնագիտական կրթության նոր ծրագրերի ներդնումը: Մինչդեռ խնդրահարույց է այն, որ ազատազրկված անձանց կրթության իրավունքն արդյունավետ ձևով չի իրացվում, ինչը կապված է օրենսդրական, պրակտիկ և մի շարք այլ խնդիրների հետ:

Այսպես, կրթություն ստանալուն օժանդակում են հեռահաղորդակցության սարքերը, սակայն դրանք ներառված են քրեակատարողական հիմնարկներում արգելված իրերի ցանկում, ինչի հետևանքով կրթություն ստանալու ցանկություն ունեցող ազատազրկված անձինք չեն կարող օգտվել համակարգչից կամ ինտերնետից:

Արթիկի երեկոյան դպրոցը կազմակերպում է «Արթիկ» ՔԿՀ-ում պատիժ կրող 18 տարեկանից բարձր դատապարտյալների հանրակրթությունը, սակայն դպրոցը չունի միջնակարգ հանրակրթական ծրագրով կրթական գործունեություն իրականացնելու լիցենզավորում: Արդարադատության և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները մինչ օրս քայլեր չեն ձեռնարկել հիմնախնդրի կարգավորման ուղղությամբ:

Ազատազրկված անձանց հանրակրթությունը, բարձրագույն և հետբուհական կրթությունը կարող է իրականացվել դրսեկության, բաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալների կրթությունը՝ ստացիոնար ձևով: Մինչդեռ ազատազրկված անձինք հիմնարկից դուրս կրթություն չեն ստանում, ինչի պատճառները դեռևս չեն ուսումնասիրվել:

Առկա չեն նաև ազատազրկված անձանց շրջանում բարձրագույն կամ հետբուհական կրթություն ստանալը խրախուսելուն կամ աջակցություն տրամադրելուն ուղղված մեխանիզմներ: Օրինակ, բարձրագույն կամ հետբուհական կրթություն ստացող անձանց պետության կողմից աջակցություն չի ցուցաբերվում, նրանք ուսման վարձը վճարում են իրենց հաշվին՝ ընտանիքների կամ հարազատների աջակցությամբ:

Ինչ վերաբերում է մասնագիտական ուսուցմանը, ապա այդ դասընթացները ոչ բոլոր հիմնարկներում են կազմակերպվում, չի ապահովվում նաև դրանց շարունակականությունը, ինչը նշանակում է, որ ազատազրկվելուց կամ մեկ հիմնարկից մեկ այլ հիմնարկ տեղափոխվելուց հետո անձը զրկվում է մասնագիտական ուսուցում ստանալու կամ այն շարունակելու հնարավորությունից:

Պատժի կրման ավարտին մինչև 6 ամիս մնացած դատապարտյալները կարող են մասնակցել Զբաղվածության պետական գործակալության կողմից իրականացվող մասնագիտական ուսուցման ծրագրերին: Մասնագիտական ուսուցումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգով ընտրված կազմակերպության կողմից և այն մասնագիտությունների գծով, որոնք կարող են ենթադրել կարճաժամկետ դասընթացներ:

Սահմանված ընթացակարգի համաձայն՝ զբաղվածության պետական գործակալությունը (Միասնական սոցիալական ծառայություն) կազմակերպել է մասնագիտական ուսուցման ծառայությունների գնման գործընթացի իրականացումը մի քանի մասնագիտությունների գծով:

Սակայն նշված շահառուների մասնագիտական ուսուցումը տվյալ ժամանակահատվածում չի իրականացվել, քանի որ գնման գործընթացին ուսուցման ծառայություններ մառուցող որևէ կազմակերպություն չի մասնակցել:

Կազմակերպությունը հաշվետու տարում ազատազրկված անձանց կրթության կազմակերպման խնդիրների վերաբերյալ 4 հանրային քննարկում է կազմակերպել:

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19

«Հանրակրթությունը քրեակատարողական հիմնարկներում»

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 21

«Բարձրագույն կրթությունը քրեակատարողական հիմնարկներում»

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25

«Գեղագիտական և կրթական ծրագրերը քրեակատարողական հիմնարկներում»

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27

«Մասնագիտական ուսուցման դասընթացները քրեակատարողական հիմնարկներում»

Քննարկումները լուսաբանվել են տարբեր լրատվամիջոցների կողմից՝

1

«ԱՌԱՎՈՏ»

«Արթիկ քրեակատարողական հիմնականում գործում է երեկոյան դպրոց, որը չունի լիցենզիա»

«Արմավիր ՔԿՀ-ի **5** դատապարտյալ սովորում է բուհում»

«Դատապարտյալները հետաքրքրված են կահույքագործությամբ, կոսմետոլոգիայով ու շինարարությամբ»

«Դատապարտյալներն ուզում են մասնագիտացում ստանալ, սակայն «Գնումների մասին» օրենքը խանգարում է»

Արթիկ» ՔԿՀ-ում գործող դպրոցի ճակատագիրը հնարավոր է հստակեցվի

2

ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔ, ԼՈՒՐԵՐ

«Դատապարտյալների կրթությունը»

«Բարձրագույն կրթություն ստացել է ընդամենը 11 դատապարտյալ»

«ՔԿՀ-ներում ծրագրերը միտված են կրթական մակարդակի բարձրացմանը»

3

FREE NEWS

«Հանրակրթությունը քրեակատարողական հիմնարկներում»

«Բարձրագույն կրթություն է ստացել ընդամենը 11 դատապարտյալ»

4

ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

«Նախկին բանտարկյալների վերաինտերգրման խնդիրները»

5

ԲՈՒՆ TV

«Կրթությունը քրեակատարողական հիմնարկներում»

6

«ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ»

«Վերջին 30 տարում Հայաստանի ՔԿՀ-ներում բարձրագույն կրթություն է ստացել ընդամենը 11 դատապարտյալ»

7

«ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈ»

«Դպրություն» հաղորդաշար. «Կրթության իրավունքի խնդիրը քրեակատարողական հիմնարկներում»

Քննարկումներ քրեակատարողական հիմնարկներում դատախազական վերահսկողության խնդիրների վերաբերյալ

2019 թվականին Քրեակատարողական օրենսգրքում փոփոխություն է կատարվել, ինչը ցմահ ազատազրկման դատապարտված անձանց հնարավորություն է տվել փակ տեսակի ուղղիչ հիմնարկում պատիժը առնվազն 15 տարի կրելուց հետո տեղափոխվել կիսափակ ուղղիչ հիմնարկ: Իսկ կիսափակից կիսաբաց կարող են տեղափոխվել 18 տարի ազատազրկումից հետո:

Սակայն դատախազությունը պարբերաբար կասեցնում է ցմահ դատապարտյալներին մեկուսացվածության առավել ցածր աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ տեղափոխելու վերաբերյալ քրեակատարողական ծառայության տեղաբաշխման հանձնաժողովի որոշումները և նոր միջնորդություն ներկայացնում՝ հարցը կրկին քննարկելու համար:

Ազատազրկված անձինք բազմաթիվ բողոքներ են ներկայացնում, որ դատախազությունը կասեցնում է նաև խրախուսանքների վերաբերյալ որոշումները:

Քաղհասարակության շրջանում մտահոգության տեղիք է տվել նաև «Կենտրոն» հեռուստաընկերության պատրաստած «Դատապարտյալները չարաշահում են իրենց տրված աշխատելու հնարավորությունը» վերտառությամբ ռեպորտաժը, ըստ որի՝ այլ գործատուների մոտ աշխատանքի անցած՝ բաց ուղղիչ հիմնարկում պատիժ կրող դատապարտյալներից ոմանք ենթարկվել են տույժի:

Հնարավոր է՝ նրանց տեղափոխեն մեկուսացվածության առավել խիստ աստիճան ունեցող հիմնարկ կամ զրկեն հիմնարկի տարածքից դուրս գալու իրավունքից: Պատճառն աշխատանքային իրավահարաբերություններում բացահայտված խախտումներն են:

Կազմակերպությունը հաշվետու տարում քրեակատարողական հիմնարկներում դատախազական վերահսկողության խնդիրների վերաբերյալ 2 մեդիա քննարկում է կազմակերպել:

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 12

«Դատախազական վերահսկողությո՞ւն, թե՞ հետապնդում»

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 14

«Ինչո՞ւ է դատախազությունը խոչընդոտում ցմահ դատապարտյալների ռեժիմների փոփոխությանը»

Քննարկումներ ազատազրկված և պրոբացիայի ծառայությունում հաշվառված կանանց վրա կորոնավիրուսի ազդեցության վերաբերյալ

Ազատազրկված անձանց շրջանում ԿՈՎԻԴ-19-ի նկատմամբ առավել խոցելի են ազատազրկված կանայք և աղջիկները: Նրանք քրեական արդարադատության համակարգում արդեն իսկ անբերանպաստ վիճակում են, քանի որ անուշադրության են մատնվում նրանց՝ սեռով/գենդերով պայմանավորված ներհատուկ կարիքները:

Վիրուսի կանխարգելման նպատակով կիրառված սահմանափակումները, զուգորդվելով նշված գործոնների հետ, առավել անհամաչափ են ազդել կանանց ու աղջիկների վրա՝ հանգեցնելով նրանց կարիքների կրկնակի անտեսմանը:

Համավարակի ժամանակ աճել են ընտանեկան և գենդերային հիմքով բռնության դեպքերը: Այս համատեքստում կրկնակի խոցելի վիճակում են հայտնվել այն կանայք, ովքեր ազատ են արձակվել քրեակատարողական հիմնարկից կամ հաշվառվել են պրոբացիայի ծառայությունում, քանի որ մի կողմից առկա է նախկինում ազատազրկվածի կամ պրոբացիայի շահառուի կարգավիճակ ունենալու հանգամանքով պայմանավորված խտրականության ենթարկվելու, մյուս կողմից՝ բռնության զոհ դառնալու վտանգ:

Նշված գործոնները, զուգորդվելով գենդերային-զգայուն վերականգնողական ծրագրերի, կացարանի կամ սոցիալական աջակցության տրամադրման բացակայության հետ, այս խմբի անանց վիճակն առավել անբարենպաստ են դարձրել:

Ստեղծված իրավիճակում վտանգված է նաև ազատազրկված և պրոբացիայի ծառայությունում հաշվառված կանանց ու աղջիկների կյանքի և առողջության պաշտպանությունը, քանի որ մարդու իրավունքների խախտման դեպքերը կարող են չզեկուցվել՝ հանրային վերահսկողության սահմանափակման պատճառով:

Կազմակերպությունը հաշվետու տարում ազատազրկված և պրոբացիայի ծառայությունում հաշվառված կանանց վրա կորոնավիրուսի ազդեցության վերաբերյալ 2 մեդիա քննարկում է կազմակերպել:

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 12

«COVID-19 կորոնավիրուսային հիվանդության ազդեցությունն ազատազրկված կանանց առողջության իրավունքի վրա»

2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 15

«COVID-19-ը և ազատազրկված ու պրոբացիայի ծառայությունում հաշվառված կանայք»

Քննարկումները լուսաբանվել են տարբեր լրատվամիջոցների կողմից:

- «Քովիդ-19 համավարակի ժամանակ «Աբովյան» ՔԿՀ-ում ընդամենը մեկ դրական դեպք է գրանցվել»
- «Անազատության մեջ գտնվող կանայք չեն ցանկանում, որ հարազատները, երեխաներն այցելեն իրենց»
- «Անազատության մեջ գտնվող կանանց մեծ մասը մինչ ազատազրկվելը չի կարողացել օգտվել բժշկական ծառայություններից»

Քննարկումներ քրեակատարողական հիմնարկներում և պրոբացիայի ծառայությունում COVID-19 համավարակին գենդերազգայուն արձագանքի մեխանիզմների մշակման և ներդրման կարևորության վերաբերյալ

COVID-19 վիրուսի ներթափանցումը կանխելու նպատակով բանտերում կիրառված ժամանակավոր սահմանափակումների ժամանակ կանանց ներհատուկ կարիքներն անտեսվել են, ինչը հանգեցրել է նրանց իրավունքների ոչ համաչափ ապահովմանը:

Կանանց խոցելիությունն անտեսվել է նաև առողջապահական և սոցիալ-հոգեբանական ծառայությունների տրամադրման, COVID-19 վիրուսի դեմ թեստավորման և պատվաստման գործընթացներում: Սահմանափակումների պատճառով պրոբացիայի ծառայությունում հաշվառված շատ կանայք կորցրել են աշխատանքը՝ հայտնվելով սոցիալ-տնտեսական ծանր կացության մեջ: Դա հանգեցրել է ոչ միայն որոշ պատիժների, օրինակ, տուգանքներ և հանրային աշխատանքներ, կատարման անհնարինությանը, այլև առողջապահական ծառայությունների անմատչելիությանը:

COVID-19 համավարակի դեմ պայքարի համատեքստում պետությունը որոշակի քայլեր է ձեռնարկել այլընտրանքային խափանման միջոցների և պատժատեսակների կիրառման, ինչպես նաև պատժից և կալանքից ազատման պրակտիկան խթանելու համար, սակայն նշված գործընթացներում կանայք չեն դիտարկվել որպես առաջնահերթ խոցելի խումբ:

COVID-19 համավարակի դեմ պայքարի համատեքստում կազմակերպության մոտեցումն այն է, որ անհրաժեշտ է.

- Գենդերազգայուն մոտեցում ցուցաբերել կանանց իրավունքների ապահովմանը:
- Նպաստել առողջապահական և սոցիալ-հոգեբանական ծառայությունների հասանելիությանը և մատչելիությանը բանտում և պրոբացիայի ծառայությունում հայտնված կանանց համար:
- Այլընտրանքային խափանման միջոցների և պատժատեսակների, արտակարգ իրավիճակների հիմքով պատժից և կալանքից ազատման մեխանիզմների կիրառման ժամանակ կարևորել կանանց ներհատուկ կարիքները և դիտարկել նրանց առաջնահերթությունը:

Կազմակերպությունը հաշվետու տարում քրեակատարողական հիմնարկներում և պրոբացիայի ծառայությունում COVID-19 համավարակին գենդերազգայուն արձագանքի մեխանիզմների մշակման և ներդրման վերաբերյալ 4 քննարկում է կազմակերպել:

2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 9

«Կորոնավիրուսի ազդեցությունն ազատազրկված և պրոբացիայի ծառայությունում հաշվառված կանանց առողջության վրա»

2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13

«Պատժից ազատման մեխանիզմները համավարակների ժամանակ»

2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 22

«Սոցիալ-հոգեբանական ծառայությունը քրեակատարողական հիմնարկներում. խնդիրներ և լուծումներ»

2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23

«Քրեակատարողական և պրոբացիայի համակարգի բարելավում. խնդիրներ և առաջարկներ»

Քննարկումները լուսաբանվել են լրատվամիջոցների կողմից:

- «Ինչու են «ընտանիքին փակելու» պարագայում մեծանում ընտանեկան բռնությունների դեպքերը. փորձագետ»
- «Համավարակի ժամանակ անազատության մեջ գտնվող անձանց նկատմամբ որևէ հատուկ մոտեցում չի ցուցաբերվել. փորձագետ»

ԶԱՏԱԳՈՎՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՆՊԱՍՏ ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

Հաշվետու տարում Կազմակերպության շահերի պաշտպանության գործունեությունն ուղղվել է ոլորտային օրենսդրության բարելավմանը, արձանագրված խնդիրները տեղական և միջազգային մակարդակում հանրայնացնելուն: Դա իր հերթին հնարավորություն է տվել ընդլայնել գործընկերային ցանցը և հանրայնացնել Կազմակերպության գործունեությունը:

Կազմակերպությունը մասնակցել է ոլորտային օրենսդրության բարելավմանը

Հայաստանում 12-ամյա միջնակարգ կամ նախնական (արհեստագործական) մասնագիտական կամ միջին մասնագիտական կրթությունը պարտադիր է մինչև սովորողի 19 տարին լրանալը, եթե այդ իրավունքը չի իրացվել ավելի վաղ:

Օրենսդրական նշված պահանջի համաձայն՝ «Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն» ՊՈԱԿ-ն իրականացրել է մինչև 19 տարեկան ազատազրկված անձանց հանրակրթական ուսուցումը: Այսինքն՝ հանրակրթական ուսուցման մեջ ներառված չեն եղել բոլոր այն կալանավորված անձինք և դատապարտյալները, ովքեր ունեն հանրակրթություն ստանալու կարիք՝ անկախ տարիքից:

Այնինչ ազատազրկված անձանց շրջանում բազմաթիվ դեպքեր են արձանագրվում, երբ անձը 19 տարեկանից բարձր է, բայց ունի, օրինակ, 2-րդ կամ 5-րդ դասարանի կրթություն: Արդարադատության նախարարության տվյալներով՝ 2021 թվականի փետրվար ամսվա դրությամբ քրեակատարողական հիմնարկներում գտնվող թերի միջնակարգ կրթություն ունեցող դատապարտյալների և կալանավորված անձանց թիվը մոտ 300 է:

Դեռևս 2019 թվականին իրականացրած հետազոտության շրջանակներում Կազմակերպությունն արձանագրել էր այս խնդիրը՝ առաջարկելով հանրակրթական ուսուցումը կազմակերպել այնպես, որ այն ներառի բոլոր ազատազրկված անձանց, ովքեր ունեն հանրակրթություն ստանալու կարիք՝ անկախ տարիքից:

ՀՀ արդարադատության նախարարությունը 2021 թվականի տարեվերջին մշակել և շրջանառության մեջ է դրել «Կրթության մասին» ՀՀ օրենքում լրացում կատարելու մասին» և «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծերը, որոնցով նախատեսվում էր հանրակրթություն ստանալու օրենսդրական երաշխիքներ սահմանել նաև 19 տարեկանը լրացած ազատազրկման ձևով պատիժ կրող և/կամ կալանավորված անձանց համար՝ ապահովելով նրանց կրթության իրավունքի իրացումը:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում 2022 թվականի սեպտեմբերից Հայաստանի քրեակատարողական հիմնարկներում իրականացվում է 19 տարեկանից բարձր դատապարտյալների հանրակրթությունը: 2022 թվականի ուսումնական տարվա սկիզբը քրեակատարողական համակարգում նշանավորվեց նրանով, որ պետական աջակցության միջոցով 19 տարեկանից բարձր տարիք ունեցող դատապարտյալները ստանում են միջնակարգ կրթություն: Պետական օժանդակությամբ դատապարտյալներն անցնում են խտացված և անհատական ուսումնական ծրագիր՝ պատրաստվելով միջնակարգ կրթության վկայական ստանալու համար պահանջվող քննություններին:

2022 թվականին Ն. Հովհաննիսյանն ընդգրկվել է ՀՀ քրեակատարողական նոր օրենսգրքի նախագծի կատարելագործման խորհրդատվական խմբում, որը բաղկացած է քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից և միտված է ապահովելու արդարադատության նախարարության և վերջիններիս միջև ավելի կառուցողական երկխոսության ամրապնդմանը:

Խմբում ներգրավված լինելը Կազմակերպությանը հնարավորություն է տվել, որպեսզի ազատազրկված անձանց կրթության կազմակերպմանն առնչվող մի շարք առաջարկություններ տեղ գտնեն քրեակատարողական նոր օրենսգրքում, որ ուժի մեջ է մտել 2022 թվականի հուլիսի 1-ից:

Ազատազրկված ԼԳԲՏ անձանց իրավունքների ապահովմանն առնչվող՝ Կազմակերպության արձանագրած խնդիրները տեղ են գտել Հայաստանում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ ԱՄՆ Պետքարտուղարության 2021 թվականի զեկույցում

Կազմակերպությունը կարևորում է համագործակցությունը միջազգային կառույցների հետ, քանի որ դա հնարավորություն է տալիս քրեակատարողական ոլորտին առնչվող խնդիրները ներկայացնել ոչ միայն տեղական կազմակերպություններին, այլև միջազգային հանրության ուշադրությունը սևեռել ոլորտում առկա խնդիրներին և բարելավման հնարավորություններին:

ԱՄՆ պետքարտուղարության Ժողովրդավարության, մարդու իրավունքների և աշխատանքի բյուրոյի մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ Հայաստանի 2021 թվականի զեկույցում, ի թիվս այլ խնդիրների, անդրադարձ է կատարվում նաև այն խնդիրներին, որոնք առնչվում են Հայաստանի քրեակատարողական հիմնարկների պայմաններին, վարչակազմին և անկախ մշտադիտարկմանը: Նշվում է, որ թեև բանտային բնակչության թիվն էականորեն նվազել է պայմանական վաղաժամկետ և COVID-19 նոր կորոնավիրուսային հիվանդության կանխարգելման նպատակով կիրառված ազատման շնորհիվ, այդուհանդերձ, քրեակատարողական ոլորտի խնդիրները համակարգային մակարդակում չեն լուծվել:

Խոցելի խմբերի անձանց իրավունքներին անդրադառնալիս զեկույցի մեջ հղում է կատարվում Կազմակերպության հրապարակած հետազոտությանը, որը վերաբերում է ազատազրկված ԼԳԲՏ անձանց իրավունքներին: Կարևորվում է այն հանգամանքը, որ նշված խմբի անձանց իրավունքները և նրանց վիճակի բարելավումը պետության համար առաջնահերթ չեն, հետևաբար ներառված չեն ոլորտին առնչվող պետական ծրագրերում, ռազմավարություններում կամ հաշվետվություններում:

Ազատազրկված ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքը և նրանց առանձնացված պահելը քրեական ենթամշակույթի առկայության հետևանք է, մինչդեռ կառավարության քաղաքականության փաստաթղթերում որպես այդպիսին չեն դիտարկվում:

Քանի որ քրեական ենթամշակույթի կանխարգելմանն ուղղված նախաձեռնությունների շրջանակներում չի դիտարկվել ազատությունից զրկված ԼԳԲՏ անձանց խոցելիությունը, իրավակիրառ պրակտիկայում դրանք բացասական հետևանք են ունենում նրանց վրա:

Զեկույցը ևս մեկ անգամ արձանագրում է Հայաստանի քրեակատարողական ոլորտի խնդիրները՝ շեշտադրելով դրանք համակարգային մակարդակում լուծելու և ազատությունից զրկված խոցելի խմբերի անձանց իրավունքների պաշտպանության մեխանիզմների բարելավման անհրաժեշտությունը:

«Խտրականության դեմ պայքարը Հայաստանում». Տարեկան համաժողով

Նարե Հովհաննիսյանը 2022 թվականի մայիսի 10-ին մասնակցել է «Խտրականության դեմ պայքարը Հայաստանում» խորագրով համաժողովին: Օրակարգում «Իրավահավասարության ապահովման մասին» օրենքի նախագծի հետ կապված իրավիճակի քննարկումն էր:

Նա իր ելույթում համաժողովին ներկա պաշտոնյաներին, դեսպանատների ու միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներին և տեղական գործընկերներին ներկայացրել է քրեակատատարողական համակարգում առկա խտրականության դրսևորումները, անհրաժեշտ օրենսդրական կարգավորումների բացակայությունը և վերջինիս բացասական ազդեցությունը հատկապես խոցելի խմբերի ազատազրկված անձանց վրա՝ անչափահասներ, կանայք, ԼԳԲՏ անձինք և հաշմանդամություն ունեցող անձինք: Նա շեշտադրել է գերատեսչությունների և ոլորտային կազմակերպությունների հետ համագործակցության կարևորությունը:

Ընդունելություն Հայաստանում ԱՄՆ դեսպանի կեցավայրում՝ ԼԳԲՏ Հպարտության ամսվա առթիվ

Հպարտության ամիսը հնարավորություն է ևս մեկ անգամ ճանաչելու այն ազդեցությունը, որ ԼԳԲՏ համայնքի անձինք ունեցել են պատմության ընթացքում, գնահատել ձեռքբերումները և առերեսվել մարտահրավերներին: 2022 թվականին տոնակատարությունը նշվեց Հայաստանում ԱՄՆ դեսպան Ն.Գ. Լին Մ. Թրեյսիի կեցավայրում կազմակերպված ընդունելության ժամանակ, որին մասնակցել է նաև Նարե Հովհաննիսյանը:

Կազմակերպությունը հետամուտ է քրեակատարողական հիմնարկներում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությանը և նրանց վերասոցիալականացմանը: «Ազատազրկված ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրները Հայաստանում» հետազոտությունն այս խմբի խնդիրների ուսումնասիրության առաջին փորձն է:

«2022 թվականի հուլիսից Հայաստանում կգործեն նոր տեսակի քրեակատարողական հիմնարկներ». Հանրային քննարկում

2022 թվականի հուլիսի 1-ից ուժի մեջ է մտել ՀՀ քրեակատարողական նոր օրենսգիրքը, որով նախատեսված են մի շարք առանցքային փոփոխություններ և նոր կարգավորումներ: Այս համատեքստում դատապարտյալների իրավունքների իրացմանն առնչվող խնդիրները և դրանք կարգավորող օրենսդրական նոր լուծումները քննարկելու նպատակով 2022 թվականի հունիսի 7-ին տեղի է ունեցել «Նոր տեսակի քրեակատարողական հիմնարկներ» թեմայով կոնֆերանս, որին մասնակցում էին քաղաքացիական հասարակության

և պետական շահագրգիռ կառույցների ներկայացուցիչները: Նարե Հովհաննիսյանը ևս մասնակցել է կոնֆերանսին և դիտարկումներ ներկայացրել նախագծի վերաբերյալ:

«Քրեակատարողական համակարգի բարեփոխումներ». Աշխատաժողով Վրաստանում

2022 թվականի նոյեմբերի 12-15-ը Նարե Հովհաննիսյանը Հայաստանի պատվիրակության կազմում մասնակցել է Վրաստանում տեղի ունեցած «Քրեակատարողական համակարգի բարեփոխումներ» թեմայով աշխատաժողովին, որի նպատակն էր դիտարկել քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի վրացական փորձը, բարեփոխումները, հաջողության պատմությունները, մարտահրավերները և հանցավորության կանխարգելման ուղղությամբ ձեռնարկված գործողությունները: Աշխատաժողովի օրակարգը հագեցած էր բանախոսություններով, որոնք վերաբերել են քրեակատարողական ծառայության վրացական մոդելին, ոլորտային բարեփոխումներին և դրանց դրական ու բացասական կողմերին, փակ հաստատություններում մարդու իրավունքների վիճակին, մոնիթորինգի և կանխարգելման մեխանիզմներին, քրեակատարողական համակարգում մարդու իրավունքների պաշտպանության ինստիտուցիոնալ մեխանիզմներին, պատժից պայմանական վաղաժամկետ ազատման համակարգին և ազատման գործընթացներին, կոռուպցիոն ռիսկերին և դրանց կանխարգելմանը:

Պատվիրակության անդամները աշխատանքային այցեր են կատարել Հանցագործությունների կանխարգելման և կատարման պրոբացիայի ազգային գործակալություն և Դատապարտյալների մասնագիտական ուսուցման և վերապատրաստման կենտրոն: Աշխատաժողովն ավարտվել է Ռուսթավիի թիվ 16 քրեակատարողական հիմնարկ այցով, որտեղ պատվիրակության անդամները ծանոթացել են հիմնարկի ենթակառուցվածքներին, կրթական կենտրոնին և դատապարտյալների համար իրականացվող վերասոցիալականացման բազմաոլորտ ծրագրերին:

«Քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի նոր ռազմավարության հիմնական ուղղությունները». Քննարկում

2022 թվականի դեկտեմբերի 14-ին կայացել է քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի նոր ռազմավարության հիմնական ուղղությունների հայեցակարգի վերաբերյալ քննարկում, որին մասնակցել է նաև Նարե Հովհաննիսյանը:

Հայեցակարգի հիմքում դրված է դատապարտյալի՝ անվտանգ և ապահով միջավայրում վերասոցիալականացման և հասարակությունում վերաինտեգրման ելակետային գաղափարը՝ առաջնայնություն տալով ոչ թե պատժի պարզապես կատարմանը, այլ դատապարտյալի վերաինտեգրմանը: Առաջնահերթությունների թվին են դասվում քրեակատարողական հիմնարկներում դինամիկ անվտանգության կոնցեպտի ներդնումը, պատժի կրման՝ ռիսկերի և կարիքների գնահատման պլանավորումը, ծառայողների պատրաստման և ատեստավորման ինստիտուտի ներդնումը, քրեակատարողական և պրոբացիայի ծառայողների փոխգործակցության արդյունավետության բարձրացումը, պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման զեկույցների բովանդակային և կոնցեպտուալ կատարելագործումը, վերասոցիալականացման կենտրոնների թվի ընդլայնումը, շենքային պայմանների բարելավումը և այլն:

«COVID-19-ը և ազատազրկման վայրերը». Տարածաշրջանային հեռավար գագաթնաժողով

2022 թվականի դեկտեմբերի 13-14-ը տեղի է ունեցել տարածաշրջանային հեռավար գագաթնաժողով, որի նպատակն էր կազմակերպությունների ներկայացուցիչներին հնարավորություն տալ խոսել իրենց երկրներում փակ հաստատություններում Քովիդ-19 համավարակի դեմ պայքարի փորձառության մասին, ներկայացնել նշված համատեքստում քրեակատարողական ոլորտի բարեփոխումների առաջարկությունները: Գագաթնաժողովի արդյունքները ներկայացվելու են մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կառույցներին:

Նարե Հովհաննիսյանը ևս մասնակցել է գագաթնաժողովին: Նա ներկայացրել է, թե Հայաստանում համավարակն ինչ ազդեցություն է ունեցել ազատազրկված և պրոբացիայի ծառայությունում հաշվառված կանանց իրավունքների պաշտպանության վրա:





ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ՝ Ի ՆՊԱՍՏ ԱԶԱՏԱԶՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ

Դիտորդների խմբի աշխատանքին մասնակցելով՝ կազմակերպությունը նպաստում է Հայաստանում քրեակատարողական համակարգի բարելավմանը

Կարևորելով ազատազրկված անձանց իրավունքների պաշտպանությունը և հանրային վերահսկողությունը՝ Կազմակերպությունն ակտիվորեն մասնակցում է քրեակատարողական հիմնարկների հասարակական դիտորդների խմբի աշխատանքներին, որը գործում է 2004 թվականից:

Դիտորդների խմբի գործունեության նպատակներն են.

- Վերահսկել կալանավորված անձանց և դատապարտյալների իրավունքների պաշտպանությունը, բացահայտել իրավունքների խախտումները, վեր հանված հիմնախնդիրները ներկայացնել հասարակությանը և ՀՀ արդարադատության նախարարությանը, աջակցել քրեակատարողական ծառայության գործունեությանը:
- Քրեակատարողական հիմնարկներում մարդու իրավունքների խախտումների բացահայտմանը և կանխարգելմանն ուղղված առաջարկություններ ներկայացնել:
- Քրեակատարողական հիմնարկներում իրավիճակի վերլուծությունները, եզրակացությունները և առաջարկությունները ներկայացնել ՀՀ արդարադատության նախարարությանը և հասարակությանը:

- Ուսումնասիրել քրեակատարողական օրենսդրությունը, անհրաժեշտության դեպքում համապատասխան իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու, նոր իրավական ակտեր մշակելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնել:

Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը Դիտորդների խմբին անդամակցում է 2017 թվականից և 2017-2022 թվականներին կատարել է վերջինիս այցերի մոտ 50 տոկոսը.

Դիտորդների խմբի այցերը





Ն. Հովհաննիսյանը մասնակցել է նաև Դիտորդների խմբի տարեկան հաշվետվությունների կազմման աշխատանքներին՝ ուսումնասիրելով քրեակատարողական հիմնարկներում արձանագրված հացադուլի, մահվան, ինքնասպանությունների և ինքնավնասումների դեպքերի վիճակագրությունը, ազատազրկված ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրականության դրսևորումները, ազատազրկված անձանց վերասոցիալականացման և կրթության կազմակերպման, արտաքին աշխարհի հետ կապի և զբոսանքի հնարավորությունները, նրանց նկատմամբ կիրառված խրախուսանքները և տույժերը:

2017 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Թեմաներ՝ «2011-2017թթ. ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում արձանագրված հացադուլի, մահվան դեպքերի, ինքնասպանության և ինքնավնասումների դեպքերի վիճակագրություն», «Խմբի գործունեության այլ բաղադրիչներ. Խմբի գործունեության խոչընդոտումներ»

2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Թեմաներ՝ «Խտրականության դրսևորումներն ազատազրկված ԼԳԲՏ անձանց նկատմամբ ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում», «ՔԿՀ-ներում արձանագրված հացադուլի, մահվան, ինքնասպանության և ինքնավնասումների դեպքերը 2018 թվականին և վիճակագրական վերլուծություն նախորդ տարիների համեմատությամբ», «Դիտորդների խմբի գործունեության խոչընդոտները. Քննիչի որոշմամբ չի կարող արգելվել դիտորդների խմբի հանդիպումը կալանավորված անձանց հետ», «Խմբի գործունեության այլ խոչընդոտումներ. ՀՀ արդարադատության նախարարությունը Դիտորդների խմբի իրավասությանը նեղ մեկնաբանություն է տալիս»

2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Թեմաներ՝ «Վերասոցիալականացման հնարավորությունները ՔԿՀ-ներում», «Արտաքին աշխարհի հետ կապը», «Ազատազրկված անձանց նկատմամբ կիրառված խրախուսանքները և տույժերը»

2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

Թեմաներ՝ «Արտաքին աշխարհի հետ կապը», «Վերասոցիալականացման հնարավորությունները ՔԿՀ-ներում»

Կարևորելով արձանագրված հիմնախնդիրների բարձրաձայնումը՝ Ն. Հովհաննիսյանը մասնակցել է աշխատանքային քննարկումների:

2022 թվականի ապրիլի 1-ին մասնակցել է աշխատանքային հանդիպման, որը տեղի է ունեցել Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնում՝ Ծառայության պետ Սերգեյ Ատոմյանի, Ծառայության ղեկավար անձնակազմի և Դիտորդների խմբի անդամների մասնակցությամբ: Քննարկվել են Դիտորդների խմբի գործունեության ընթացքում հայտնաբերված թերությունները, դրանց լուծման ուղիները և ժամկետները, քրեակատարողական հիմնարկների կարողությունների զարգացման հեռանկարները, կարևորվել են դատապարտյալների զբաղվածության ստեղծման հնարավորությունները, քրեակատարողական ծառայողների բավարար հմտությունների և գիտելիքների ապահովումը, անդրադարձ է եղել ազատազրկված անձանց վերասոցիալականացման խնդիրներին, մասնավորապես նկատվել է դրական տեղաշարժ քրեակատարողական հիմնարկների կողմից կրթական դասընթացների կազմակերպման և անցկացման գործընթացում:

Նա քրեակատարողական հիմնարկներում արձանագրված խնդիրները հանրայնացրել է նաև տարբե լրատվամիջոցներում:

1

ԳԱԼԱ

«Խափանման միջոցի ընտրությունն էլ պետք է հիմնավորված լինի, ինչը որոշ դեպքերում այդպես չի լինում»

2

ՋԵՄՆՅՈՒԶ

«Բանտը չի ուղղում». Հայաստանում վաղաժամկետ ազատ արձակման որոշումներ հազվադեպ են ընդունվում

3

1-ԻՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ

«ՔԿՀ ում որևէ անձ չպետք է ենթարկվի անմարդկային վերաբերմունքի»

4

ՖԱԿՏՈՐ TV

«Դատապարտյալների սնունդը մատուցվում է խախտումներով»

2022 թվականին քրեակատարողական հիմնարկներ կատարած ակտիվ այցերի համար Ն. Հովհաննիսյանն արժանացել է շնորհակալագրի:

Ընթացիկ տարում ակտիվորեն մասնակցել է Դիտորդների խմբի նիստերին և աշխատանքային քննարկումներին, որոնց ընթացքում քննարկվել են տարեկան ծրագրերն ու անելիքները, մշտադիտարկման գործիքակազմերը, տարեկան զեկույցի կազմման աշխատանքները, պլանային այցերը և դրանց արդյունավետ կազմակերպումը, նոր անդամների ներգրավումը և այլն: Օրակարգային հարցերը վերաբերել են նաև պլանային այցերի ժամանակ խոչընդոտների առաջացման դեպքում համապատասխան արագ արձագանքման միջոցներ ձեռնարկելուն, մշտադիտարկման նոր գործիքների ստեղծմանը և կիրառմանը:

Քրեակատարողական հիմնարկներ կատարած այցերի արդյունքում և տարեկան զեկույցներում բացահայտված հիմնախնդիրների կարգավորման առնչությամբ Դիտորդների խումբը տարաբնույթ առաջարկություններ է ներկայացրել ՀՀ արդարադատության նախարարությանը: Ներկայացված առաջարկությունները և արձանագրումները տեղ են գտել ոլորտը կարգավորող օրենսդրության մեջ և քաղաքականության փաստաթղթերում, ուրվագծել են քրեակատարողական և պրոբացիայի ոլորտի նոր ռազմավարության շրջանակները:

Ակնկալում ենք, որ Կազմակերպության ջանքերի ներդնումը կնպաստի քրեակատարողական հիմնարկներում հանրային վերահսկողության ուժեղացմանը՝ այդպիսով նպաստելով քրեակատարողական համակարգի բարելավմանը Հայաստանում:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

2022 թվականի մարտի 22-ին Եվրասիա միջազգային համալսարանի և Կազմակերպության միջև համագործակցության հուշագիր է կնքվել, որի նպատակն է նպաստել աշխատաշուկայում համալսարանի ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, նրանց որպես կամավորների ներգրավել կազմակերպությունում և մասնակցել բուհի հետազոտական աշխատանքներին:

Կողմերը պատրաստակամություն են հայտնել համատեղ կազմակերպել շահառուների գործնական հմտությունների զարգացման արտալսարանային դասընթացներ, դատախաղեր, նմանակումներ (simulations), իրականացնել հետազոտություններ ու քննարկումներ, մասնակցել իրավաբանական կլինիկայի աշխատանքներին:

Հուշագրի դրույթները կյանքի կոչելով՝ համալսարանի իրավագիտության ամբիոնի 2 ուսանող հաշվետու տարում ներգրավվել են Կազմակերպության աշխատանքներում որպես հարցազրուցավար և ծրագրի օգնական:

2022 թվականին ապրիլի 22-ին համալսարանի իրավագիտության ամբիոնի հետ համագործակցությամբ կազմակերպվել է «Ազատազրկված անձանց աշխատանքային իրավունքները (օրենսդրական փոփոխությունների լույսի ներքո)» թեմայով գիտագործնական սեմինար:

Բանախոսները՝ համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու Նորայր Աքիլյանը և Նարե Հովհաննիսյանը, անդրադարձել են աշխատանքային իրավունքի օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորումներին, քրեակատարողական նոր օրենսգրքով նախատեսված փոփոխություններին, բարելավման ուղղությամբ ձեռնարկված գործողությունների արդյունավետությանը և այլն: Ն. Հովհաննիսյանը ներկայացրել է քրեակատարողական հիմնարկներում առկա հնարավորությունները՝ վարձատրվող և չվարձատրվող աշխատանքներ, դրանց առանձնահատկությունները՝ ըստ ուղղիչ հիմնարկի տեսակների

(բաց, կիսաբաց, կիսափակ, փակ) և ըստ անձանց իրավական կարգավիճակի (կալանավորված անձ, դատապարտյալ), այլ գործատուների մոտ աշխատանքը, քրեակատարողական հիմնարկից դուրս գալուց հետո նախկինում ազատազրկված անձանց աշխատանքի տեղավորման հնարավորությունները, հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության արդյունավետությունը: Անդրադարձ է կատարվել «Աջակցություն դատապարտյալին» հիմնադրամի գործառույթներին, ստեղծագործական և արհեստագործական աշխատանքով զբաղվելու հնարավորություններին: Ներկայացվել է աշխատելու առավելությունը և դրա կապն ուղղիչ հիմնարկի տեսակի փոփոխության, պայմանական վաղաժամկետ ազատման, խրախուսանքի արժանանալու և դրական բնութագրվելու հետ:

2022 թվականի մայիսին համալսարանի իրավագիտության ամբիոնի դասախոս Նունե Ջոմարդյանը և Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը մասնակցել են Հանրային ռադիոյի «Դպրություն» հաղորդաշարի «Կրթության իրավունքի խնդիրը՝ քրեակատարողական հիմնարկներում» թեմայով քննարկմանը:

Ն. Հովհաննիսյանը ներկայացրել է այն խնդիրները, որոնց դատապարտյալներն առնչվում են կրթության իրավունքն իրացնելիս՝ օրենսդրական բացեր, համալսարանների և բանտային համակարգի միջև ոչ արդյունավետ համագործակցություն, ուսման վարձի վճարման և ուսումնական նյութերի ձեռքբերման հետ կապված դժվարություններ, խտրական վերաբերմունք և այլն: Ն. Ջոմարդյանը ներկայացրել է համալսարանի կրթական ծրագրերը, դատապարտյալների բարձրագույն կրթությունը կազմակերպելու կարևորությունը և այդ հարցում համալսարանի փորձառությունը և պատրաստակամությունը:

Համագործակցության հուշագիր՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության և «Իրավական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի միջև

2022 թվականի ապրիլի 12-ին հուշագիր է կնքվել է կնքվել Քրեակատարողական ծառայության և Կազմակերպության միջև: Նպատակն է երկուստեք համախմբել ուժերը՝ ազատազրկված անձանց համար վերասոցիալականացման, կրթական ու աշխատանքային միջոցառումներ և ծրագրեր, քրեակատարողական ծառայողների մասնագիտական գիտելիքների, կարողությունների ու հմտությունների զարգացմանն ուղղված ոլորտային ուսուցողական ծրագրեր և վերապատրաստումներ իրականացնելու և այլ կարևոր գործողությունների ուղղությամբ:

Քրեակատարողական ծառայության հետ համագործակցության համատեքստում Կազմակերպությունը հաշվետու տարում մի շարք ծրագրեր իրականացրել՝ ուղղված քրեակատարողական հիմնարկների սոցիալական աշխատողների և հոգեբանների մասնագիտական հմտությունների զարգացմանը, քրեակատարողական համակարգում գենդերային զգայուն քաղաքականության ներդրմանը, բանտերում COVID-19 համավարակին գենդերազգայուն արձագանքի մեխանիզմների մշակմանը ներդրմանը:

Հաշվետու տարում համագործակցության հուշագրերի կնքումը շարունակական բնույթ է կրել քրեակատարողական ծառայությունում:

2022 թվականի հոկտեմբերի 24-ին համագործակցության հուշագիր է կնքվել Քրեակատարողական ծառայության և Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի միջև:

2022 թվականի նոյեմբերի 24-ին համագործակցության հուշագիր է կնքվել Քրեակատարողական ծառայության և Եվրասիա միջազգային համալսարանի միջև:

Նշված հուշագրերի համատեքստում կարևորվել են քրեակատարողական ծառայողների մասնագիտական վերապատրաստումները, համալսարանների շրջանավարտների պրակտիկաների կազմակերպումը քրեակատարողական հիմնարկներում, ազատազրկված անձանց կրթության կազմակերպման հնարավորությունների ընդլայնումը:

Համագործակցության ընդլայնում «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ

Կազմակերպությունը կարևորում է ազատազրկված անձանց տրամադրվող առողջապահական ծառայությունների բարելավումը: Այս համատեքստում կարևորում է հոգեկան առողջության խնդիր ունեցող ազատազրկված անձանց մատչելի և որակյալ առողջապահական ծառայությունների տրամադրումը, դրանց հասանելիության ապահովումը, քանի որ նշված խմբի անձինք կալանավորման կամ ազատազրկման ձևով պատժի կրման ընթացքում առնչվում են մի շարք խնդիրների՝ կապված առողջապահական և այլ ծառայությունների հասանելիության, իրենց հիմնական իրավունքների ապահովման հետ:

Կազմակերպությունը կարևորում է նաև վնասի նվազեցման ծրագրերի հասանելիությունը քրեակատարողական հիմնարկներում: Այս համատեքստում դեռևս 2021 թվականին իրականացրել է «Ազատազրկված ԼԳԲՏ անձանց հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով հետազոտություն, որի շրջանակներում ուսումնասիրել է ազատազրկված ԼԳԲՏ անձանց շրջանում ՄԻԱՎ ծառայությունների որակի և հասանելիության հետ կապված խնդիրները և դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունները ներկայացրել Արդարադատության նախարարությանը:

Կազմակերպությունը 2022 թվականից իր գործունեության ընթացքում առանձնակի ուշադրություն է դարձրել քրեակատարողական բուժօգնության ծառայությանը վերաբերող խնդիրների քննարկմանը և ուսումնասիրությանը:



Տարեսկզբից սկսել է իրականացնել «COVID-19-ի ազդեցությունն ազատազրկված և պրոբացիայի ծառայությունում հաշվառված կանանց ու աղջիկների իրավունքների պաշտպանության վրա» ծրագիրը, որի շրջանակներում ուսումնասիրվել են նշված խմբերի կանանց իրավունքների խախտումները համավարակի պայմաններում: Հետազոտության շրջանակներում դիտարկվել են ՊՈԱԿ-ի «Աբովյան» ՔԿՀ-ի ստորաբաժանման բուժկետների վիճակը, դրանց համալրվածությունը և համավարակներին արձագանքելու պատրաստվածությունը: Կազմակերպվվել են հանրային քննարկումներ՝ ներկայացնելու առողջապահական ծառայությունների ծավալը, որը ՊՈԱԿ-ը տրամադրում է ազատազրկված անձանց, վեր հանելու խնդիրները և դրանց լուծման տարբերակները: Բարձրաձայնվել են այն խնդիրները, որոնց առերեսվել են ազատազրկված կանայք և պրոբացիայի կին շահառուները COVID-19-ով պայմանավորված սահմանափակումների ժամանակ:

Նախատեսվում է բանտերում և պրոբացիայի ծառայությունում COVID-19 համավարակին գենդերազգայուն արձագանքի քաղաքականության փաստաթուղթ մշակել:

Կարևորերով ՊՈԱԿ-ի բուժանձնակազմի մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացումը՝ Կազմակերպությունը հաշվետու տարում վերապատրաստման դասընթաց է իրականացրել բժիշկների համար:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Կազմակերպությունը կարևորում է վերապատրաստման դասընթացներին մասնակցությունը, ինչը նպաստում է ոլորտային գործունեությամբ զբաղվելուն ուղղված կարողությունների և հմտությունների զարգացմանը: Հաշվետու տարում դասընթացներից ձեռք բերված գիտելիքները և հմտություններն ամրապնդել են Կազմակերպության ներկայացուցիչների գիտելիքները՝ ուղղված ծրագրերի արդյունքների առավել արդյունավետ և հասցեական ջատագովության իրականացմանը:

Արդարադատության ոլորտում բարեփոխումների մշտադիտարկման, զեկույցների մշակման և շահահապաշտպանության իրականացման կարողությունների զարգացման դասընթաց

2022 թվականի սեպտեմբերի 27-30-ն Աղվերանում տեղի է ունեցել «Արդարադատության ոլորտում բարեփոխումների մշտադիտարկման, զեկույցների մշակման և շահահապաշտպանության իրականացման կարողությունների զարգացման» քառօրյա դասընթաց: Քննարկումներն ընթացել են 4 թեմատիկ խմբերում, որոնք ուսումնասիրել են հակակոռուպցիոն, դատաիրավական, ոստիկանության, քրեակատարողական, պրոբացիայի ոլորտների ռազմավարությունները և մարդու իրավունքների վիճակը տվյալ ոլորտներում:

Դասընթացին մասնակցել է նաև Նարե Հովհաննիսյանը, ով ներգրավվել է քրեակատարողական և պրոբացիայի ոլորտին առնչվող թեմատիկ խմբում, որտեղ քննարկվել են քրեակատարողական հիմնարկներում և պրոբացիայի ծառայությունում իրականացվող մոնիթորինգները, ուսումնասիրվել է դրանց գործիքակազմը: Անդրադարձ է կատարվել ստանդարտների և նորմերի միջազգային շրջանակին, զուգահեռներ են անցկացվել Հայաստանում կիրառվող մեթոդների հետ՝ նպատակ ունենալով ճիշտ ռազմավարություն մշակել և հետագայում կիրառել:

Քննարկումների ընթացքում կարևորվել է քաղաքացիական հասարակության ջանքերի ազդեցությունը քրեակատարողական և պրոբացիայի ոլորտում: Ներկայացվել է, թե ինչպես պետք է գործողությունների պլանը մշակվի, որպեսզի ռազմավարության ու մոնիթորինգի մեջ անհրաժեշտ փոփոխություններ իրականացվեն:

Շահերի պաշտպանություն և քաղաքականության վրա ազդեցություն՝ փակ հաստատություններում COVID-19-ի համատեքստում

2022 թվականի հուլիսի 22-23-ը Նարե Հովհաննիսյանը և Կազմակերպության ծրագրերի օգնական Էդգար Մանուչարյանը մասնակցել են «Շահերի պաշտպանություն և քաղաքականության վրա ազդեցություն՝ փակ հաստատություններում COVID-19-ի համատեքստում» թեմայով դասընթացին, որի նպատակն էր բարելավել կազմակերպությունների հմտությունները շահերի պաշտպանության և հաղորդակցության շուրջ և տրամադրել անհրաժեշտ գործիքներ, թե ինչպես ձևակերպել հաղորդագրությունները Covid-19-ի շուրջ փակ հաստատություններում, մասնավորապես՝ քրեակատարողական հիմնարկներում և հոգեկան առողջության հաստատություններում պահվող մարդկանց համար:

Դասընթացը ներառում էր թեմաներ հաղորդագրությունների մշակման, շահերի պաշտպանության գործիքների, գործընկերային ցանցերի ձևավորման, սոցիալական մեդիաների, հաղորդակցության և մասնակիցների կողմից բացահայտված այլ խնդիրների վերաբերյալ: Այն սովորեցրեց, թե ինչպես կարելի է համատեղել ջանքերը՝ նպաստելու համար ուժեղ շահերի պաշտպանության շարժմանը:

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏԵՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ

Համագործակցության ընդլայնում լրատվամիջոցների հետ

Կազմակերպությունը 2021 թվականից սկսած մեծ ուշադրություն է դարձնում արտաքին հաղորդակցությանը և այդ շրջանակներում բարելավել է համագործակցությունը լրատվամիջոցների հետ:

Կազմակերպության գործունեությունը և իրականացրած ծրագրերը, քրեակատարողական և պրոբացիայի ոլորտների վերաբերյալ վերջինիս արձանագրած խնդիրները լուսաբանվում են լրատվամիջոցների կողմից:

Դա հնարավորություն է տվել բարձրաձայնել ազատազրկված անձանց խնդիրների մասին, տեսանելի դարձնել քրեակատարողական և պրոբացիայի ոլորտների փոփոխությունները:

Լրատվամիջոցների հետ աշխատանքի շնորհիվ բարձրացել է նաև Կազմակերպության՝ որպես ազատազրկված անձանց խնդիրներով զբաղվող կառույցի տեսանելիությունը:

Այս համատեքստում Կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանը հրավիրվում է մասնակցելու մի շարք հաղորդումների, հարցազրույցների և քննարկումների:

Ի թիվս նշված լրատվամիջոցների՝ 2022 թվականին Կազմակերպության գործունեությունը և քրեակատարողական համակարգի վերաբերյալ վերջինիս արձանագրած խնդիրները լուսաբանել են նոր լրատվամիջոցներ ևս՝ Հայկական ժամանակ, Ռադիո Վան, Epress.am, forrights.am, Մեդիալաբ, Ջեմնյուզ, Panorama.am, ԳԱԼԱ TV, 1-ին լրատվական, Media Hub, Factor TV, Բուն TV, Ազատություն և Free News:

2021 թվականին Կազմակերպության նախաձեռնած քննարկումներին անդրադարձ է կատարվել մի շարք հարցերի՝ պրոբացիայի շահառուների համար կրթական և մասնագիտական

ծրագրերի ապահովում, շահառուներին աշխատանքի տեղավորման հարցում աջակցության տրամադրում, կին և անչափահաս շահառուների նկատմամբ անհատական մոտեցման և մասնագետ աշխատողների համալրման կարևորություն, տարբեր պետական և ոչ պետական կառույցների հետ համագործակցության ստեղծում, նոր վերասոցիալականացման ծրագրերի ներդրման անհրաժեշտություն և այլն: Քրեակատարողական համակարգին առնչվող քննարկումների ժամանակ Կազմակերպությունը կարևորել է ազատազրկված անձանց վերասոցիալականացմանը, նրանց համար աշխատանքային հնարավորությունների ստեղծմանը և կրթական ծրագրերի ընդլայնմանն ուղղված գործողությունները:

2022 թվականի ընթացքում կազմակերպության նախագահ Նարե Հովհաննիսյանն իր ելույթներում և հարցազրույցներում խոսել է քրեակատարողական հիմնարկներում կրթության կազմակերպման հնարավորությունների և դատապարտյալների վերաինտեգրման խնդիրներին մասին:

Կազմակերպության նախաձեռնած մեդիա-քննարկումներին անդրադարձ է կատարվել հետևյալ հարցերի շրջանակին՝ ազատազրկված անձանց հանրակրթության, միջին մասնագիտական և բարձրագույն կրթության կազմակերպում, ազատազրկված կանանց խնդիրներ, COVID-19 համավարակի ազդեցությունն ազատազրկված ու պրոբացիայի ծառայությունում հաշվառված կանանց իրավունքների վրա, պայմանական վաղաժամկետ ազատ արձակման ինստիտուտին և խափանման միջոցների ընտրությանն առնչվող խնդիրներ, ազատազրկված անձանց տրամադրվող սննդի որակ, դատախազության կողմից խրախուսանքների և դատապարտյալներին մեկուսացվածության առավել ցածր աստիճան ունեցող ուղղիչ հիմնարկ տեղափոխելու վերաբերյալ քրեակատարողական ծառայության տեղաբաշխման հանձնաժողովի որոշումների կասեցում և այլն: Լրատվամիջոցները լայնորեն լուսաբանել են «Ձեռքդ տո՛ւր, հասարակություն» խորագրով ցուցահանդես-վաճառքը, որը տեղի է ունեցել 2022 թվականի մարտի 11-ին:

Կազմակերպությունը բարձր է գնահատում լրատվամիջոցների հետ համագործակցությունը և նախատեսում է առաջիկայում ընդլայնել այն:

ՆՇԱՆԱՎՈՐ ՕՐԵՐ

Քրեակատարողական համակարգի խնդիրները հանրային օրակարգում և հասարակության ուշադրության կենտրոնում պահելու նպատակով Կազմակերպությունը հաշվետու տարում ևս տարբեր նշանավոր օրերի խորհուրդը կապել է քրեակատարողական ոլորտի խնդիրների հետ՝ շնորհավորական ուղերձներ հղելով կամ պետությանը կոչ անելով քայլեր ձեռնարկել այդ խնդիրների լուծման ուղղությամբ:

Հունվարի 24-ը Կրթության միջազգային օրն է

Կազմակերպությունը՝ հետամուտ լինելով օրվա խորհրդին և ազատազրկված անձանց կրթության կազմակերպման գործընթացում առկա հիմնախնդիրների լուծմանը, պետությանը կոչ է անում անհրաժեշտ քայլեր ձեռնարկել համապատասխան օրենսդրության բարելավման և պրակտիկ խնդիրների կարգավորման ուղղությամբ:

Ապրիլի 7-ը մայրության և գեղեցկության օրն է

Շատ կանայք այս օրն անցկացնում են անազատության մեջ և ունեն առանձնակի սիրո և ջերմության կարիք: Մաղթում ենք, որ չնայած կյանքի դժվարություններին՝ կանայք պահպանեն իրենց կանացիությունը և միշտ ուժեղ լինեն:

Մայիսի 15-ը ընտանիքի միջազգային օրն է

Մայիսի 15-ին նշվում է ընտանիքի միջազգային օր: Ազատազրկված անձանց համար դա կարոտի օր է, քանի որ հեռու են իրենց ընտանիքի սիրուց ու ջերմությունից: Ընտանիքի հանդեպ սերն է նրանց ուժ տալիս՝ պայքարելու, ուղղվելու, ազատության ու նոր կյանքի ձգտելու: Թող բոլոր ընտանիքները վերամիավորվեն ու երջանիկ լինեն...

Մայիսի 28-ը Կանանց առողջության համար գործողությունների միջազգային օրն է

Օրվա համատեքստում Կազմակերպությունը կարևորում է ազատազրկված կանանց առողջությանն առնչվող խնդիրների լուծումը: Բանտային պայմաններն անհամաչափ ձևով են ազդում կանանց հոգեկան, սեռական և վերարտադրողական առողջության վրա: Առավել խոցելի են տարեց, խրոնիկ և վարակիչ հիվանդություններ ունեցող, հղի և իրենց մոտ երեխա ունեցող, ինչպես նաև օտարերկրացի ազատազրկված կանայք: Դեռևս խնդրահարույց է գենդերազգայուն առողջապահական ծառայությունների հասանելիությունը:

Հունիսի 1-ը Երեխաների պաշտպանության օրն է

Թող մեր հասարակությունում բոլոր երեխաների իրավունքները պաշտպանված լինեն՝ անկախ այն հանգամանքից, թե նրանք ճաղերի որ կողմում են...

Հունիսի 21-ը Բուժաշխատողի օրն է

Շնորհավորու՛մ ենք քրեակատարողական համակարգի բուժաշխատողներին մասնագիտական տոնի առթիվ: Նրանց բարեխիղճ ու հոգատար աշխատանքը բանտային առողջապահության բարելավման գրավականն է:

Հոկտեմբերի 5-ը Ուսուցչի միջազգային օրն է

Շնորհավորու՛մ ենք քրեակատարողական համակարգի ուսուցիչներին: Ուսուցիչները հիմնաքարային դերակատարում ունեն ազատազրկված անձանց հանրակրթության ապահովման և ըստ այդմ՝ նրանց վերասոցիալականացմանը նպաստելու հարցում:

Հոկտեմբերի 7-ը Գրադարանավարի օրն է

Շնորհավորու՛մ ենք քրեակատարողական հիմնարկների գրադարանավար-դատապարտյալներին՝ գրադարանավարի օրվա առթիվ: Ազատազրկված անձանց համար գրականության, գրադարանի և ընթերցասրահների հասանելիությունն ապահովելը կարևոր նշանակություն ունի ոչ միայնկրթության և զբաղվածության, այլև արտաքին աշխարհի հետ հաղորդակցվելու իրավունքի իրացման տեսանկյունից:

Հոկտեմբերի 10-ը Հոգեկան առողջության համաշխարհային օրն է

Հոկտեմբերի 10-ը նշվում է որպես Հոգեկան առողջության համաշխարհային օր՝ նպատակ ունենալով բարձրացնել հոգեկան առողջության մասինիրազեկվածությունն ամբողջ աշխարհում և աջակցել հոգեկան առողջության խնդիրներ ունեցողներին:

Օրվա համատեքստում Կազմակերպությունը կարևորում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող ազատազրկված անձանց կարիքները և պետության պատշաճ արձագանքը նրանց խնդիրների լուծմանը:

Հոկտեմբերի 19-ը Քրեակատարողական ծառայողի օրն է

Շնորհավորում ենք քրեակատարողական ծառայողներին՝ մասնագիտական տոնի առթիվ: Կազմակերպությունը գնահատում է քրեակատարողական ծառայության ջանքերը՝ ուղղված համակարգի բարելավմանը, վերասոցիալականացման քաղաքականության անցմանը, ազատազրկված անձանց աշխատանքային և կրթական հնարավորությունների ընդլայնմանը:

Նոյեմբերի 4-ը Սոցիալական աշխատողի օրն է

Շնորհավորում ենք քրեակատարողական համակարգի սոցիալական աշխատողներին՝ մասնագիտական օրվա առթիվ:

Նոյեմբերի 22-ը Հոգեբանների մասնագիտական օրն է

Շնորհավորում ենք քրեակատարողական համակարգի հոգեբաններին՝ մասնագիտական օրվա առթիվ:

«ԻՐԱՎԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ»

ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

+374 55 155 300

info@prisoninitiatives.am

www.prisoninitiatives.am

https://www.facebook.com/legalinitiativesngo/

https://www.youtube.com/@prison-initiatives-2022

https://twitter.com/@initiatives_ngo

https://t.me/legalinitiatives